

Ազգային

ԼՁ. ՏԱՐԻ ԹԻՒ 1974 ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 23 ՓԵՏՐՈՒՄ 2015
• VOL. XXXVI, NO 1974 • LUNDI, 23 FEVRIER 2015 • MONDAY, FEBRUARY 23, 2015

1915-2015
ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
100-ԲԳ ՏԱՐԵԳԱՐՁ



ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՄ



ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆ

Վերջին օրերին հանրապետության քաղաքական դաշտում տեղի ունեցող իրադարձությունները տազնապալի իրավիճակ են ստեղծել հասարակական-քաղաքական շրջանակներում: Մտահոգ է մեր ողջ ժողովուրդը, Հայաստանում թե սփիւռքում:

Գաղտնիք չէ, որ հանրապետությունում առկայ են սոցիալ-տնտեսական եւ քաղաքական լուրջ դժուարություններ, որոնց լուծումը հրատապ է եւ առաջնահերթ:

Յստակ է նաեւ, որ մենք ունենք Արցախեան հիմնախնդիրը, նենգ հարեւան, որը առիթը բաց չի թողնում սահմանին հերթական լարուածութիւնը ստեղծելու համար: Հետեւաբար, երկրի համար գերակայ է անվտանգութեան ապահովման հարցը, որի շուրջ օրնիբուն պետք է աշխատեն թե՛ գործող իշխանութիւնները, թե՛ ընդդիմութիւնը եւ թե՛ քաղաքական ու հասարակական միւս բոլոր կազմակերպութիւնները:

Ռամկավար Ազատական կուսակցութիւնը ելնելով ստեղծուած լարուած այս իրավիճակից՝ կոչ է անում հայրենի իշխանութիւններին, Հայաստանի Հանրապետական, Բարգաւած Հայաստան կուսակցութիւններին եւ քաղաքական անհատ գործիչներին աւելի սթափ գնահատել իրավիճակը, տուրք չտալ զգացմունքայնութեանը, մնալ քաղաքական պայթարի պատշաճ մակարդակում եւ անցնում պահել հայրենիքը:

Միւս կողմից, հաշուի առնելով համազգային կարեւորութիւն ունեցող Մեծ եղեռնի 100-ամեայ տարելիցն ու հայոց պահանջատիրութեան հետ առնչուող զարգացումները՝ Ռամկավար Ազատական կուսակցութիւնը յոյս է յայտնում, որ բոլոր քաղաքական ուժերը, հանրապետութեան ողջ բնակչութիւնը, տուրք չի տայ տարաբնոյթ կոչերին ու տարաձայնութիւններին, այլ կը գործի միայն ի շահ մեր ազգային դատի արդարացի լուծման եւ հայրենիքի բարգաւաճման եւ հզօրացման:

Երեւան,

16 Փետրուար 2015 թ.

Հանրապետութեան նախագահը Ազգային ժողովէն ետ կանչեց Հայաստան-Թուրքիա արձանագրութիւնները

Նախագահ Սերժ Սարգսեան Ազգային ժողովէն ետ կանչեց Հայաստան-Թուրքիա արձանագրութիւնները: Ան այդ վերաբերեալ նամակով դիմած է Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակեանին՝ նշելով. «Ժամանակի անսպառ չլինելու մասին խօսել եմ բազմիցս, այդ թում՝ 2014 թուականի Սեպտեմբերին, ՄԱԿ-ի գլխաւոր վեհաժողովի ամբիոնից: Ցաւում եմ, որ Հայաստանի այդ յորդորը լսելի չեղաւ Թուրքիայի ղեկավարութեան համար: Ուստի, ես որոշում եմ կայացրել 2009 թուականի Հոկտեմբերի 10-ին Ցիւրիխում ստորագրուած «Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան միջեւ յարաբերութիւնների զարգացման մասին» արձանագրութիւնները Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովից ետ կանչելու վերաբերեալ»:

Նախագահի նամակին մէջ ըսուած է. «Յարգելի պարոն Սահակեան, Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների՝ առանց նախապայմանների կարգաւորման գործընթացը սկսելիս մենք լիովին պատկերացրել ենք Հետագայ զարգացումների բոլոր հնարաւոր տարբերակները: Մենք պատրաստ էինք ինչպէս արձանագրութիւնների վաւերացման միջոցով յարաբերութիւնների համապարփակ կարգաւորմանը, այնպէս էլ դրանց ձախողուելու տարբերակներին, քանզի թաքցնելու ոչինչ ունէինք, եւ միջազգային հանրութեան համար պարզ էր դառնալու, թէ իրականում որ կողմի մեղքով այդպէս էլ չբացուեց Եւրո-



պայի վերջին փակ սահմանը եւ բաց թողնուեց հնարաւորութիւնը:

Արդէն մօտ վեց տարի է անցել Հայաստան-Թուրքիա արձանագրութիւնների ստորագրումից: Այս ամբողջ ընթացքում Հայաստանը մշտապէս հետեւողական դիրքորոշում է ցուցաբերել արձանագրութիւնները կեանքի կոչելու հարցում:

Սակայն պետք է փաստել Թուրքիայի իշխանութիւնների քաղաքական կամքի բացակայութիւնը, արձանագրութիւնների տառի ու ոգու աղաւաղումները եւ նախապայմանների շարունակաբար արժարծումբ: Դրան զուգահեռ, Հայոց Ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի նախաշեմին, նոր թափ է ստանում ժխտողականութեան եւ պատմութեան խմբագրման քաղաքականութիւնը:

Ժամանակի անսպառ չլինելու մասին խօսել եմ բազմիցս, այդ թում՝ 2014 թուականի Սեպտեմբերին, ՄԱԿ-ի գլխաւոր վեհաժողովի ամբիոնից: Ցաւում եմ, որ
Շար. էջ 3

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԵՐԵՔ ԹԵՄԵՐՈՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԷՋ ՍՐԲՈՑ ԴԵՒՈՆԴԵԱՆՑ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Փետրուար 10-ին, հիւրընկալութեամբ Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդութեան, Արեւելեան եւ Արեւմտեան ու Գանատական թեմերու բոլոր հոգեւորականները Սրբոց Դեոնոդեանց Տօնին առիթով գումարեցին աննախընթաց համագումար մը, մասնակցութեամբ շուրջ 35 հոգեւորականներու: Արեւելեան Թեմի Առաջնորդ՝ Գեր. Տ. Խաժակ Արք. Պարսամեանը կը բացակայէր ճամբորդութեան պատճառաւ: Գանատահայոց Թեմէն ներկայ էին Առաջնորդ՝ Տ. Աբգար Եպս. Յովակիմեան, Արժ. Տ. Վազգէն Քինյ. Պոյաճեան (հովիւ Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ), Արժ. Տ. Չարեհ Ա. Քինյ. Չարգարեան (հովիւ Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ), Արժ. Տ. Կոմիտաս Քինյ. Միրզախանեան (հովիւ Լաճալի Ս. Խաչ Եկեղեցւոյ):

Ս. Դեոնոդեանց Տօնը կը յիշատակէ 451 թուին Աւարայրի Վարդանանց ճակատամարտին Ս. Դեոնոդի եւ իր գործակից հոգեւորականներու քաջարի մասնակցութիւնը եւ հետագայ նահատակութիւնը: Աւանդութիւն դարձած է, որ այս տօնին առիթով հայ հոգեւորականներ եկեղեցական յատուկ արարողութիւններու կողքին, գումարեն նաեւ հաւաքներ, իրենց առաքելութեան շուրջ քննարկումներու եւ թելադրութիւններու խորհրդակցութեան համար:

Երեքշաբթի, Փետրուար 10-ին ժամերգութիւն կատարուեցաւ Արեւմտեան Թեմի Առաջնորդանիստ Սրբոց Դեոնոդեանց Մայր Եկեղեցւոյ մէջ, որուն յաջորդեց համագումարի նիստը, նախագահութեամբ Արեւմտեան



Թեմի Առաջնորդ՝ Գեր. Տ. Յովան Արք. Տերտերեանի: Ժողովի ընթացքին Արեւմտեան Թեմի Եւ Գանատահայոց Թեմի առաջնորդները մանրամասն գեկոյցներ ներկայացուցին իրենց թեմերուն մասին:

Շար. էջ 3

Փրոֆեսոր Աուրոս խստորեն քննադատեց Իսրայելի նախագահը՝ Հայոց Ցեղասպանութիւնը ջարդ անուանելուն համար

«Զալիֆորնիա քուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ կը գրէ.
www.TheCaliforniaCourier.com

Իսրայելի նախագահ Ռուվըն Ռիվլինի Յունուար 28-ի ելոյթը Նիւ Եորքի ՄԱԿ-ի Գլխաւոր ասամպլեայի մէջ լուրջ բանավեճի նիւթ դարձաւ:

Ռիվլին, որպէս Զընեսեթի (խորհրդարանի) նախագահ եւ անդամ, երկար տարիներ պայքարած է, որպէսզի Իսրայելը ճանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը: Սակայն նախագահ դառնալէն ետք, ինչպէս ԱՄՆ նախագահ Օպամա, Ռիվլին նոյնպէս չկամեցաւ վերահաստատել իր սկզբունքային դիրքորոշումը այս հարցին առնչութեամբ:

Անցեալ ամիս նախագահ Ռիվլին հզօր ելոյթ մը ունեցաւ ՄԱԿ-ի Գլխաւոր ասամպլեայի մէջ՝ Հոլոքոսթի գոհերու յիշատակի միջազգային օրուան արարողութեան ժամանակ: Ցաւօք, Իսրայելի նախագահը երկու լուրջ սխալ թոյլ տուաւ: Ան Հայոց Ցեղասպանութիւնը անուանեց ջարդ, եւ այդ մեկնաբանութիւնը հաւասարակշռելու համար անդրադարձաւ Արցախեան պատերազմի ժամանակ խոջալու գիւղին մէջ տեղի ունեցած ատրպէյճանցիներու սպանութիւններուն:

Ահա հատուած մը ՄԱԿ-ի մէջ Ռիվլինի ունեցած ելոյթէն. «Երբ 1915 թուականին կը կոտորէին հայ ժողովուրդի զաւակները, Աւշալոմ Ֆէյնպըրկը՝ Առաջին Համաշխարհային ժամանակ դաշնակիցներու հետ գործակցող «Նիլի» հրեական լրտեսական ցանցի ղեկավար անդամներէն մէկը, գրած էր, կը մեջբերեմ. «Ես ցասումէն ատամներս կրծտացնելով կը մտածեի, թէ ո՞վ պիտի ըլլայ յաջորդը: Երուսաղէմի ճանապարհին, երբ կը քալէի օրինուած եւ սուրբ հողին վրայով, եւ ինծի հարց տուի, թէ ինչպիսի ժամանակներու մէջ կ'ապրինք, արդեօք այժմ 1915 թուականն է, թէ Թիթոսի կամ Նապոլեոնոստորի դարաշրջանը: Արդեօք մոռցած էմ, որ հրեայ եմ: Ես նաեւ հարցուցի ես ինծի՝ արդեօք իրաւունք ունիմ լալու միայն իմ ժողովուրդի ողբերգութեան վրայ, միթէ՞ Երեմիա մարգարէն արհեստ արցունքներ չէր թափած նաեւ հայերու համար»: Աւշալոմ Ֆէյնպըրկը ասիկա գրած է ուղիղ 100 տարի առաջ: Վարանումի եւ Ժիտումի 100 տարի: Այն տարիներուն Իսրայելի, Երուսաղէմի մէջ, ուր ես ծնած էմ, ոչ մէկը կը համարձակէր հերքել տեղի ունեցած ջարդը: Երուսաղէմի բնակիչները, իմ ծնողներս եւ ընտանիքի անդամներս տեսած են այդ աղետը վերապրած սովալլուկ ու թշուառ հազարաւոր հայ փախստականները: Անոնք Երուսաղէմի մէջ ապաստան գտան, եւ մինչեւ այսօր անոնց ժառանգները կը շարունակեն այնտեղ ապրիլ»:

Իսրայելի Բաց համալսարանի փրոֆեսոր, ակաւաւոր մտաւորական Եյիր Աուրօնը, զայրացած է իր նախագահի բառերու ընտրութեան վրայ՝ հակառակ անոր հետ ունեցած անձնական մտերմութեան: Աուրօնը եղած է Իսրայելի կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման վաղեմի ջատագով եւ ատոր վերաբերեալ բանի մը գրքերու հեղինակ: Այժմ ան կը դասաւանդէ Հայաստանի ամերիկեան համալսարանին մէջ:

Յունուար 31-ին, երբ ես դասախօսութիւն կու տայի Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ Երեւանի նորաբաց Կոմիտասի թանգարանին մէջ, փրոֆեսոր Աուրօնը մօտեցաւ ինծի եւ հարցուց, թէ արդեօք կրնայ դիմել լսարանին: Թոյլտուութիւն ստանալէ ետք, ան կարողաց իր անձնական յայտարարութիւնը, որ վերնագրած էր. «Ներողութիւն կը խնդրեմ իմ հայ եղբայրներէս»:

«Իսրայելի նախագահ Ռուվըն Ռիվլինը հանդէս եկաւ ուշագրաւ ելոյթով, շատ յուզիչ նախադասութիւններով՝ անկեղծօրէն եւ խորապէս ներկայացնելով հայ ժողովուրդի տառապանքները: Սակայն, ան միտումնաւոր կերպով չօգտագործեց Հայոց Ցեղասպանութիւն եզրը՝ ոչ եբրայերէն, ոչ անգլերէն»: Փրոֆեսոր Աուրօնը շարունակեց՝ բացայայտելով, որ նախագահ Ռիվլինը անձամբ ըսած է իրեն, որ «չէ փոխած իր կարծիքը, սակայն չի կրնար այն [ցեղասպանութիւն] յայտարարել իբրեւ Իսրայելի նախագահ: Ասիկա ես կրնամ հասկնալ: Սակայն, ելոյթի վերջին թուային, ինչ-որ մէկը, հաւանաբար Իսրայելի արտաքին գործոց նախարարութենէն, գուցէ նոյնիսկ Իսրայելի արտաքին գործոց նախարար Ավիկտոր Լիպըրմանը անոր թելադրեց, որ ներառէ հետեւեալ սարսափելի նախադասութիւնը. «Արդեօք մեր պայքարը՝ այս Ասամպլեայի պայքարը, ցեղասպանութեան դէմ բաւարար չափով արդիւնաւէ՞տ էր: Արդեօք այն արդիւնաւէ՞տ էր Պոստիոյ մէջ: Արդեօք արդիւնաւէ՞տ էր Խոճալուի սպանութիւնները կանխելու համար»:

Փրոֆեսոր Աուրօնը շարունակեց իր քննադատական ելոյթը. «Պարոն նախագահ, դուք խոճալուի անունը կիրառեցիք ցեղասպանութեան պարունակին մէջ: Դուք շատ լաւ գիտէք ցեղասպանութեան եւ ջարդերու տարբերութիւնը... ո՞վ առաջարկեց ձեզի, պարոն նախագահ, ո՞վ խնդրեց, որ ընէք այս սարսափելի սխալը: Դուք չօգտագործեցիք ցեղասպանութիւն եզրը Հայոց Ցեղասպանութեան մասին յիշատակելու ատեն: Ցեղասպանութեան եզրի կիրառումը Լեռնային Ղարաբաղի գիւղի մը վերաբերեալ՝ անընդունելի է... Դուք չէք համարձակիք ցեղասպանութիւն եզրը օգտագործել Հայոց Ցեղասպանութեան առնչութեամբ, իսկ այս գիւղի արհեստագործութիւնը, որուն անունը, վստահ եմ, չէիք գիտեր ձեր ելոյթէն քանի մը վայրկեան առաջ, կը բնորոշէ որպէս ցեղասպանութիւն: Ատիկա սրբապղծութիւն է, եւ ատով դուք կը դաւաճանէք Հոլոքոսթի եւ անոր գոհերու յիշատակը»:

Առաքինի փրոֆեսորը իր սրտի խօսքը ակարտեց՝ խոստանալով. «Իմ հայ եղբայրներ, թոյլ տուէք իմ եւ իսրայելցի բազմաթիւ հրեաներու անունով ներողութիւն խնդրել ձեզմէ: Մենք ձեզի հետ ենք: Մենք չենք դադրեցներ մեր պայքարը մինչեւ Իսրայել չճանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը»:

Թարգմանութիւնը՝ Ռուկաննա Աւագեանի Արեւմտահայերէնի վերածեց՝ ԵՌԱԳՈՅԼ

Լեռնային Ղարաբաղի Ազգային Ժողովի ընտրութիւնները տեղի պիտի ունենան Մայիս 3-ին

Լեռնային Ղարաբաղի Ազգային Ժողովի հերթական ընտրութիւնները տեղի պիտի ունենան 3 Մայիս 2015-ին: Ընտրութիւններու նշանակման մասին հրամանագիրը ԼՂՀ նախագահ Բակո Սահակեան ստորագրած է Փետրուար 12-ին: Այս մասին կը տեղեկացնէ Արցախի նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխաւոր վարչութիւնը:

23 Մայիս 2010-ին տեղի ունեցած են ԼՂՀ Ազգային Ժողովի նախորդ ընտրութիւնները, որոնց արդիւնքով խորհրդարան անցած էր երեք կուսակցութիւն՝ ԼՂՀ Ներկայիս վարչապետ Արայիկ Յարութեանի գլխաւորած «Ազատ հայրենիք»՝ 14 պատգամաւոր, ԼՂՀ Ազգային Ժողովի նախագահ Աշոտ Ղուլեանի գլխաւորած «Արցախի ժողովրդավարական կուսակցութիւն»՝ 11 պատգամաւոր, Հայ Ցեղափոխական Դաշնակցութիւն՝ 6 պատգամաւոր, ինչպէս նաեւ 6 անկուսակցական պատգամաւորներ:

ԱՊԱԳԱՅ
Շարքաքերթ

ABAKA

Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

Պատասխանատու խմբագիր՝
ԱԻԵՏԻՍ ՊԱԳԱՆԵԱՆ

Ծանուցումներու,
նուիրատուութիւններու եւ
գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԻ ՄԱԿԻՍԵԱՆ

Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՏԱԹ Բ. ՄԱՄՈՒԻԵԱՆ

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$90
U.S.A. 1st class (US)\$90
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75

Dépôt légal: Bibliothèque du Québec

PM40015549R10945

TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

Ահմէտ Թիւրքի ճառախօսութիւնը՝ Համալուրկի մէջ

«Ամօթ կը զգանք մեր նախահայրերուն կողմէ Հայ եւ Ասորի ժողովուրդներու դէմ կատարուածներուն դիմաց «մենք աղքատութեան հետ ծանօթացանք երբ Հայեր եւ Ասորիներ լքեցին այս հողերը Մարտինի Մայր Զաղաքապետութեան Համանախագահ՝ Ահմէտ Թիւրք Թուրքիոյ մէջ 6 Յունիսին կատարելի ընտրութիւններու նախա-աշխատանքներու առնչութեամբ ճառախօսութիւն մը ըրաւ Համալուրկի մէջ: Ահմէտ Թիւրք ելոյթ ունեցաւ Համալուրկի Վետտել թաղամասին մէջ, ուր Եւրոպական աղբիւրներու համաձայն, խօսեցաւ Թուրքիոյ մէջ կատարելի ընտրութիւններու մասին եւ պատգամներ տուաւ այս նիւթի շուրջ:

որոնք մեզ բերած են այս օրերուն: «Թուրքիոյ մէջ ժողովրդավարական ուժերու հետ նոր ապրելակերպի մը հիմը պիտի դնենք: Ասիկա կը նշանակէ Հայ, Ասորի եւ Եգիպտներու հետ ազատական վարչաձեւի նոր կառոյց մը հաստատել: Մեր բոլոր ջանքերը կը միտին ժողովուրդներու եղբայրական մթնոլորտ կառուցանելու: Մեր նախահայրերուն կողմէ Հայ եւ Ասորի ժողովուրդներու դէմ կատարած իրողութիւններու դիմաց ամօթ կը զգանք: Մենք աղքատութեան եւ չբաւորութեան հետ ծանօթացանք այն ատեն, երբ Հայեր եւ Ասորիներ լքեցին այս հողերը: Անոնք մեր երկրին հարստութիւնը կը կազմէին» ըսաւ քաղաքագետը:

Թիւրք ըսաւ որ 1911 թուականին Իթթիհատ եւ Թերաքքի կուսակցութիւնը ինչ որոշումներ որ ընդունեց եւ կիրարկեց, այդ որոշում-

ները նոյնութեամբ կիրարկուեցան Հանրապետական շրջանի ամբողջ տեւողութեան: «Ներկայիս կը տիրապետէ տակաւին միեւնոյն մտայնութիւնը: Դժբախտութիւն է հաստատել սակայն որ 1914-15 թուականներուն պետութեան կողմէ անուանած որոշումներու կիրարկութիւնը գործադրուեցաւ Զիւրտ ժողովուրդին կողմէ» ըսաւ ան:

Ահմէտ Թիւրք յայտնեց որ ժողովուրդներու ազատութեան համար զենքը այլեւս առանձին բաւարար չէ: Չենքիս առընթեր քաղաքականութեան մէջ ալ փոփոխութիւն պէտք է կիրարկել: «Պատերազմի մէջ մեր ձեռք բերած հարստութիւնները քաղաքականութեան սեղանին վրայ կրնանք կորսնցնել: Թուրքիոյ ժողովուրդին հանդէպ մեր զգացած պատասխանատուութեան Շար. էջ 14

“We acknowledge the financial support of the Government of Canada through the Canada Periodical Fund (CPF) for our publishing activities.”

Աշոտ Մելքոնեան. «Թրքական ժխտողականութեան դրոյթները փտած են եւ հին»

Թուրքիոյ կողմէ Հայոց Յեղասպանութիւնը ժխտելու եւ մերժելու բոլոր դրոյթները եւ նախաձեռնութիւնները այլեւս փտած են, անիմաստ եւ հին, ըսած է ՀՀ ԳԱԱ պատմութեան հիմնարկի տնօրէն Աշոտ Մելքոնեան: Անոր գնահատումով, Թուրքիա սպառնալից է բոլոր քայլերը ժխտողականութեան առնչութեամբ եւ արդէն անհեթեթութեամբ կը զբաղի:

«Արմէնփրէս»-ի հետ զրոյցի ընթացքին Մելքոնեան շեշտած է, որ թրքական դիւանագիտութեան «ճարպիկութիւնը» վերջ գտաւ Կալիփոլիի ճակատամարտի օրը Ապրիլ 24 տեղափոխելով:

«Սա՞ է թուրքական ցունամին, դիւանագիտական ճարպկութիւնը: Սա իրականութեան մէջ իրենից ոչինչ չներկայացնող անբարոյ քայլ է Երտողանի կողմից: Թուրքական քայլերը կարելի է համարել սպառնալից, եւ դա պատահական չէ: Մեր պարագայում գլխաւոր հենքը ճշմարտութիւնն է, թուրքերի պարագայում՝ ստախոսութիւնն ու կեղծիքը, որը, ժողովրդական լեզուով ասած, չի կարող տեսել քառասուն օրից աւելի: Նման մօտեցումներով թուրքերն իրենց արդէն սպառնել են: Թուրքական մերժողականութիւնը, հայ-թուրքական հաշտեցման համաձայնագիրը, հայ-թուրքական արձանագրութիւնները մի շարք էին, որ արդէն սպառնել են իրենց», - ըսած



է Մելքոնեան՝ աւելցնելով, թէ ճիշդատու պայմանաւորում է, որ նախորդ տարի Ապրիլ 23-ին Երտողանի նման ընդգծուած հակահայ գործիչը հարկադրուած կետով չափ խոստովանեցաւ 1915-ի եղելութիւնը: «Նա ասաց, որ իբր դրանք ցեղասպանութիւն չեն, եւ իրենք էլ են տուժել դրանից: Բայց փաստը, որ այն կարծիք ժխտողականութիւնից սկսել է ընդունել ցեղասպանութեան եղելութիւնը վկայութիւնն է նրա, որ աշխարհի հետ խօսել այդ փտած, կարծրացած մերժողականութեան դիրքերից հնարաւոր չէ», - ըսած է Մելքոնեան՝ Կալիփոլիի ճակատամարտի 100-

ամեակին նուիրուած թրքական տօնակատարութիւնը համարելով ոչ միայն անհեթեթ, այլեւ որոշ առումով զաւեշտալի:

«Կալիփոլիի ճակատամարտն սկսուել է 1915 թ. Մարտի 18-ին եւ շարունակուել մինչեւ 1916 թ. Յունիսար ամիսը: Ռուսաստանի դաշնակից Անգլիան եւ Ֆրանսիան որոշեցին նաւատորմ մտցնել նեղուցներ՝ դրանով փորձելով Ռուսաստանին կտրել թուրքական նեղուցներին տիրելու իրենց նախկին պայմանաւորութիւնից, բայց հենց այդ ճակատամարտի հետեւանքով 1916 թ. համաձայնագրով Անգլիան եւ Ֆրանսիան համաձայնեցին, որ նեղուցներն անցնեն Ռուսաստանին: Անգլիան եւ Ֆրանսիան քայլ կատարեցին նեղուցներին տիրաւարտելու համար եւ Տարտանսի նեղուցով փորձեցին անցնել Պոլիս: Դա նրանց չյաջողուեց: Անգլիան, Աւստրալիան եւ Նոր Չելանտիան կորցրեցին 180.000 մարդ, Ֆրանսիան 27.500, իսկ Թուրքիան կորցրեց 200.000 մարդ: Եւ այդ 200.000 մարդու արեան գնով դաշնակիցներին կանգնեցրած Թուրքիան տօնում է իր յաղթանակը: Սա իրականութեան մէջ յաղթանակ չէ: Սա արհեստաբար արեց Թուրքիային եւ Կալիփոլիի ճակատամարտում զոհերը բերեցին 1918թ. Հոկտեմբերի 30-ին Մուտրոսի զինադադարին, որով Թուրքիան ճանաչեց իր

պարտութիւնը: Ներկայացուած յաղթանակն իրականում այդպէս չէ. կայ հարցի երկրորդ կողմը: Պատկերացրէք, Անգլիայի գահաժառանգը գնայ, մասնակցի արարողութեանը եւ արձանագրի իր երկրի կրած խայտառակ պարտութեան փաստը Կալիփոլիի ճակատամարտում: Եթէ ՌԴ-ից որեւէ մէկը պետք է գնայ, ապա պետք է գնայ, որ պետք ընդունի եւ ցաւակցի 100 տարի առաջ իր դաշնակիցներ Անգլիայի եւ Ֆրանսիայի պարտութիւնը: Անկեղծ ասած, սա անհեթեթ մի քայլ է Թուրքիայի կողմից, դժուար է անգամ պատկերացնել, թէ ինչպէս են յանգել նման որոշման», - ըսած է Մելքոնեան՝ աւելցնելով, որ հայկական կողմը պետք է շարունակէ իր աշխատանքը Հայոց Յեղասպանութեան ճանաչման եւ իրաւական տեսակետ հարցի լուծման առնչութեամբ:

Ի տարբերութիւն նախորդ տասնամեակներուն, այս տարի Թուրքիոյ կառավարութիւնը որոշած է Կալիփոլիի ճակատամարտի 100-ամեակը տօնել Ապրիլ 24-ին: Այդ առիթով Երտողան 102 երկրի առաջնորդներու հրաւեր ուղարկած է: Երտողանի այս նախաձեռնութիւնը արժանացած է թէ թրքական, թէ միջազգային մամուլի քննադատութեան:

Հիւսիսային Ամերիկայի...

Շար. էջ 1-էս



ժողովէն ետք Ս. Պատարագ մատուցուեցաւ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ: Պատարագիչն էր Գանատահայոց Առաջնորդ Գեր. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան: Առաջնորդ Տ. Յովնան Արք. Տերտերեան ողջունեց ներկայութիւնը Տ. Աբգար Սրբազանի եւ հրաւիրեց որ Գանատահայոց Նորընտիր Առաջնորդը տայ օրուան իր պատ-

գամը, որուն յաջորդեց օծումը շարք մը խաչքարերու, նուիրուած Հայոց Յեղասպանութեան Հարիւրամեակին:

Մէկ օր առաջ Թեմակալ Առաջնորդները եւ հոգեւորականները այցելեցին Լոս Անճելըսի «Արարատ Տուն»ը, օրհնելու եւ խրախուսելու հոն ապրող հայ տարեցները:

Թուրք փաստաբան Էրէն Զեւքին խիզախ յայտարարութիւններով հանդէս եկաւ

Թրքական քրեական օրէնսգրքի տիրահառչակ 301-րդ յօդուածը, որուն շուրջ բաւական ժամանակ լռութիւն կը տիրէր, փաստաբան Էրէն Զեւքին դատավարութենէն յետոյ դարձեալ օրակարգի նիւթ դարձած է: Այս առումով Պոլսոյ «Ակօս» թերթի լրագրողը գրուցած է հայամետ կեցուածքով ուշադրութիւն գրաւող փաստաբանին հետ՝ դատավարութեան, խօսքի ազատութեան եւ Հայոց Յեղասպանութեան մասին:

Խօսելով դատավարութեան պատճառներուն մասին՝ փաստաբանը յիշեցուցած է, թէ զինք դատապարտած են, քանի որ 12-ամեայ քիւրտ փոքրիկին ու անոր սպանութեան մասին իր ելոյթին մէջ՝ 2005 թուականին՝ նշած էր, թէ ատիկա Թուրքիոյ մէջ Նոր բռնութիւն չէ եւ որ Թուրքիան ստեղծուած է յանցանքներու շարքի վրայ: Ան յիշեցուցած է իր այն խօսքերը, որոնց համար իր դէմ գործ յարուցուած էր. «1915-ի Հայոց Յեղասպանութենէն սկսելով մինչեւ մեր օրերը պետութիւնը կեղտոտ պատմութիւն ունի եւ անոր պետք է առերեսուի:

Հառերեսուիլը Նոր յանցանքներ կը ծնի»: «Այս պետութիւնը կարմիր գիծեր» ունի եւ անոնցմէ ամենակարեւորը Հայոց Յեղասպանութիւնն է: Զրտական հարցը, Կիպրոսի գրաւումը, հակաժողովրդավարական ըլլալը՝ ասոնք այն թեմաներն են, որոնց մասին կառավարութիւնը չի փափաքիր, որ խօսողներ ըլլան», ըսած է ան: Հակառակ զինք դատելուն Զեւքին կը նշէ, որ վերջին տարիներուն բան մը փոխուած է Թուրքիոյ մէջ: «10 տարի առաջ Հայոց Յեղասպանութեան մասին ոչ ոք կը խօսէր, սակայն այժմ քիչ-քիչ սկսած են խօսիլ:

Նոյնը քրտական հարցին շուրջ», ըսած է Զեւքին:

Հանրապետութեան նախագահը...

Շար. էջ 1-էս

Հայաստանի այդ յորդորը լսելի չեղաւ Թուրքիայի ղեկավարութեան համար:

Ուստի, ես որոշում եմ կայացրել 2009 թուականի Հոկտեմբերի 10-ին Ցիւրիխում ստորագրուած «Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան միջեւ յարաբերութիւնների գարգացման մասին» արձանագրութիւնները Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովից ետ կանչելու վերաբերեալ»:

Հայ աշակերտներու ձեռամբ պատրաստուած Ամմոռուկները Ապրիլ 24-ին պիտի բաժնուին Ծիծեռնակաբերդ բարձրացող Հիւրերուն

Հայաստանի Հանրապետութեան կրթութեան եւ գիտութեան նախարարութեան մէջ տեղի ունեցած է աշխատանքային խորհրդակցութիւն՝ Հայոց Տեղասպանութեան 100-րդ տարելիցին հանրակրթութեան ոլորտին մէջ նախատեսուած ձեռնարկներու վերաբերեալ: Խորհրդակցութիւնը վարած է նախարար Արմէն Աշոտեան: Ինչպէս՝ ըստ «Արմէնփրէս»-ի՝ կը տեղեկացնեն ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութենէն, նախարարին ներկայացուած են այն ձեռնարկները, որոնք Տեղասպանութեան 100-րդ տարելիցի առիթով նախատեսուած են հանրակրթական բոլոր հաստատութիւններուն մէջ:



Մասնաւորապէս, ի թիւս այլ ձեռնարկներու, որոշուած է, որ Մարտ 24-ին Հայաստանի դպրոցներու 5-12-րդ դասարանները պիտի պատրաստեն Հայոց Տեղասպանութեան 100-րդ տարելիցի խորհրդանիշ ընդունուած անմոռուկներ՝ 1,5 միլիոն հատ, որոնք յետագային պիտի տրամադրուին Ապրիլ 24-ին Ծիծեռնակաբերդ բարձրացող մեր Հայրենակիցներուն եւ օտարերկրեայ հիւրերուն:

Խորհրդակցութեան ընթացքին ճշգրտուած են նաեւ նախատեսուած ձեռնարկներու ժամանակացոյցը եւ քննարկուած են կազմակերպական այլ հարցեր:

«Պատմութիւնն ուսումնասիրելու փուլը վաղուց անցել է» Վիգէն Սարգսեան

Հայոց ցեղասպանութեան հարցում Հայաստանը շատ յստակ արտայայտել է իր դիրքորոշումը. պատմութիւնն ուսումնասիրելու փուլը վաղուց անցել է, և եթէ Թուրքիայում որևէ մէկը ցանկութիւն ունի առերեսուելու պատմութեանը, դրա համար կան շատ ուղիներ:



Այս մասին Tert.am-ի հետ գրոյցում ասաց Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող, Նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգէն Սարգսեանը՝ անդրադառնալով Թուրքիայի նախագահ Ռեճեփ Թայյիփ Էրտողանի կողմից կրկին պատմաբանների յանձնաժողով ստեղծելու առաջարկի մասին յայտարարութեանը:

«Այդ պատմութեանը թուրք քաղաքական գործիչները ծանօթ են ոչ պակաս, քան հայ պատմաբանները, և ոչ պակաս, քան թուրք պատմաբանները, հետևաբար պատմութիւնն ուսումնասիրելու փուլը կարծում եմ վաղուց անցել է», - ասաց Վիգէն Սարգսեանը:

Ինչ վերաբերում է հարցին, թէ Թուրքիային յաջողո՞ւմ է միջազգային հանրութեան աչքին թող փչել, նա ասաց. «Ես մինչ օրս չեմ տեսել միջազգային հանրութեան մէջ տրամաբանող որևէ մեկին, ով կ'ըսեր, թէ Հայոց ցեղասպանութիւն չի եղել կամ այդ յանցագործութիւնը տեղի չի ունեցել: Ես լսել եմ յաճախ, որ կան այս կամ այն երկրում քաղաքական գործիչներ, ովքեր ասում են՝ այս պահին նպատակայարմար չեն գտնում ճանաչելու Տեղասպանությունը՝ ելնելով ինչ-ինչ քաղաքական հաշուարկներից, բայց ժխտողականութիւն տեսնում եմ միայն երկու երկրներում՝ Թուրքիայում և Ատրպէյճանում», - ասաց նա:

ԿԸ ՆՈՒԱԶԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամայի հրապարակած 2016 տարեշրջանի ամավարկին մէջ, կ'առաջարկուի աւելի եւս նուազեցնել Հայաստանի տրամադրուելիք տնտեսական օժանդակութիւնը: Նոյնը կ'առաջարկուի նաեւ Ատրպէյճանի պարագային:

Հայաստանի համար առաջարկուած գումարն է 18.36 միլիոն տոլար, որ 2 միլիոնով նուազ է 2014ի տուեալէն եւ նուազ քան կէսը՝ Քոնկրէսի Հայկական համախմբումին կողմէ անցեալ տարի առաջադրուած 40 միլիոնին: Ատրպէյճանի համար կ'առաջարկուի 8 միլիոն տոլարի օժանդակութիւն, իսկ Վրաստանի համար՝ 50.5 միլիոն տոլար: Ռազմական օժանդակութիւնը կը մնայ նոյնը՝ 2.3 միլիոնական տոլար Հայաստանի եւ Ատրպէյճանի:

ՀԲԸՄ տրամադրած է աւելի քան 1 միլիոն տոլարի կրթանպաստներ



ՀԲԸՄ կը տեղեկացնէ, թէ 2014-2015 կրթական տարեշրջանին ընթացքին, աւելի քան 1 միլիոն տոլարի կրթանպաստներ տրամադրած է մօտաւորապէս 40 երկիրներու մէջ ուսում ստացող ուսանողներու:

Այդ գումարին աւելի քան 300,000-ը յատկացուած է Միացեալ Նահանգներէն դուրս ուսանող 275 ուսանողներու, իսկ 250,000 տոլար՝ արուեստներու մէջ մասնագիտացող կամ աստուածաբանական ուսմանց հետեւող 68 ուսանողներու:

Հինգ կրթանպաստներ տրամադրուած են նաեւ Միացեալ Նահանգներու մէջ ՀԲԸՄ-ի երեք երկրորդական վարժարաններէ 5 ուսանողներու, նպաստելու համար անոնց համալսարանական ուսման:

Նաեւ, մօտաւորապէս 100 ուսանողներ, որոնք իրենց համալսարանական մասնագիտական ուսումը կը շարունակեն Միացեալ Նահանգներու մէջ, ստացած են 365,000 տոլարի հասնող կրթանպաստ:

Շարունակելով նեցուկ կանգնիլ Հայաստանի Ամերիկեան համալսարանին՝ ՀԲԸՄ-ը անոր 30 ուսանողներու 50,000 տոլարի կրթանպաստ յատկացուցած է, ինչպէս նաեւ համալսարանին եւ Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան հետ համագործակցաբար՝ զինուորներու յատուկ կրթանպաստներու ծրագրի մը նախաձեռնած է:

Դարձեալ Հայաստանի մէջ, ՀԲԸՄ-ը 30,000 տոլարի կրթանպաստ յատկացուցած է Հայաստանի Ֆրանսական համալսարանի 23 ուսանողներու: Նաեւ, 130,000 տոլարի կրթանպաստներ յատկացուցած է իրենց համալսարանական ուսումը Հայաստանի մէջ շարունակող սուրիահայ 415 ուսանողներու:

ՀԲԸՄի կրթանպաստներու տարբեր ծրագիրներուն մասին յաւելեալ տեղեկութեանց համար, այցելել www.agbu-scholarship.org կայքը:

«Ակօս»ի Նոր խմբագիրը

Պոլսոյ հայկական «Ակօս» թերթի գլխաւոր խմբագրի պաշտօնը ստանձնած է Եղուարդ Դանգիլեան, որ պիտի փոխարինէ 2010 թուականէն այդ պաշտօնը վարող Ռոպերթ Քոփթաշին: Նոր խմբագիրը ծնած է 1969-ին, Պոլիս: Ուսանած է Միսիթարեան վարժարանին մէջ: Ան իր ներդրումը ունեցած է «Ակօս» թերթի հիմնադրութեան մէջ եւ աշխատակցած է քանի մը թրքական թերթերու: Անոր յօդուածները լոյս տեսած են թրքական Birtakim եւ Radikal թերթերուն մէջ: 2008-էն ի վեր Դանգիլեան կը պաշտօնավարէր նաեւ «Ակօս»ի մէջ:



Կոմիտասի տունը տակաւին կանգուն է Կուտիսայի մէջ

Ըստ Tert.am-ի, թրքական Yeni Kütahya կայքէջը անդրադարձած է Սողոմոն Սողոմոնեանի՝ Կոմիտասի կեանքի պատմութեան եւ նշած է, որ տունը, ուր ան ծնած է, դեռ կանգուն է:

ունեցող Կուտիսան իր գոյութեան ընթացքին բազմաթիւ արժէքներ, վառ անհատականութիւններ ունեցած է, որոնց շնորհիւ կրնայ մշակութային զբօսաշրջութիւնը զարգացնել: Գնելով Կոմիտասի տունը՝ կարելի է զայն երաժշտական թանգարանի վերածել եւ ամէն տարի Կոմիտասի անունով դասական երաժշտութեան փառատօներ, ձեռնարկներ կազմակերպել», կը գրէ կայքէջը:

Կայքէջը կենսագրական փաստեր ներկայացուցած է ընթերցողներուն՝ յիշեցնելով, որ Կոմիտաս հայերէն, քրտերէն, թրքերէն ժողովրդական շուրջ 4.000 երգեր հաւաքած է նօթագրած է: «7.000 տարուան պատմութիւն

ԱՆՑԵԱԼԻ ՔԱՌՈՒՐԻՆԵՐԸ

ԿՈՅՐ ՎԱՆԵՑԻ ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿԸ, ՈՐ 50 ՏԱՐԻ ԵՂԱԻ ԶԱԶԱՐԱԲՈՐՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉԸ

ՅԱԿՈՔ ՎԱՐԳԻՎԱՌԵԱՆ

Եղեռնի դարադարձի այս օրերուն, որքան կենսական է արժեւորել նաեւ ոչ կուսակցական ազգային դէմքեր, որոնք նոյնքան հայրենակներ գործ կատարած են մեր ազգին ու հայրենիքին համար: Եթէ անոնց առիթը չտրուեցաւ լայնօրէն արձագանգելու ու մեծարելու, սակայն, անոնց դրոշմը մնաց սերունդներու դաստիարակութեան ու աճման բովանդակ շրջանին:

Այդ համբուրելի կրթական մշակներէն էր անկասկած Յամբարձում Երամեանը: Ծնած էր Վան 1857ին: Տաս տարեկան հասակին կորսընցուցած էր իր աչքի լոյսը, մեծագոյն պատճառը իր դժբախտութեան:

Հակառակ ասոր, սակայն չէ յուսահատած, բարձր պահած է իր կորովը եւ աշխատելու եռանդը: Զեռնութեան հասնող յարատեւութեամբ մը հասած է բարձր զարգացումի եւ նաեւ՝ դիրքի, որ եզակի մնացած է Վասպուրականի հայ կեանքէն ներս, որպէս կրթական մշակ թէ քաղաքական հանրածանօթ ներկայութիւն մը: Ան նուիրուեցաւ հայրենիքի կրթական գործին, որ կարելի է ըսել թէ ոչինչ ունէր իր մէջ միախառնական 19րդ դարու ութսունական թուականներուն, երբ հիմնեց իր անհատական վարժարանը, որ յամր բայց հաստատուն քայլերով պիտի յառաջդիմէր, պիտի մեծնար ու գեղեցկանար:

Իր տուած հարիւրաւոր շրջանաւարտներով պիտի կազմէր Վանի ուսումնական դասակարգը, վերջապէս նոր սերունդը, որուն հոգեւոր հայրը եղաւ այս կրթական մեծ մշակը, վայելելով իր այդ գաւակներուն անմոռաց սերը եւ երախտագիտութիւնը, այնքա՛ն թանկագին իրեն համար, մանաւանդ իր

վերջին թափառական կեանքի օրերուն: Զիչ անգամ կրթական մշակ մը այսքան սիրուած ու քաջալերուած է: Երամեան արժանի դարձաւ այդ սրտագին գնահատութեան:

Երամեան կրթական կեանքէն դուրս ալ նուիրուեցաւ մտաւորական կեանքին: Ունի բազմաթիւ յօդուածներ թերթերու եւ պարբերականներու մէջ: Գրած է պատմական, հայրենասիրական, հայրենագիտական գանձանակ նիւթերու շուրջ:

Ձանացած է ըլլալ համերաշխութեան առաքեալ մը քաղաքական տարբեր հոսանքներու միջեւ, մանաւանդ դուրսէն Վան եկած կովկասահայ յեղափոխականներու եւ Վանի մէջ արմատացած արմենականներուն միջեւ: Արդարեւ Երամեան կը մնար անշահախնդիր մաքուր հայրենասէրը: Իր ամբողջ էութիւնը լեցուցած էր Հայաստանով ու Վանով, որոնք իրարմէ անջատ վայրեր չէին իրեն համար, այլ մէկը միւսին ամբողջացնող, մէկ եւ անբաժան Հայրենի Լեռնաշխարհ մը: Եւ ճիշդ ատոր համար ալ ան մնաց մինչեւ իր վերջին շունչը հարազատ վանեցի մը, կենդանի խորհրդանիշը Վան-Վասպուրականի, որուն յառեց ընդմիշտ իր անյոյս ակնարկը, սկսած՝ անսահման սիրով եւ անոր համար ապրած եւ գործած՝ իր ամբողջ կեանքի ընթացքին:

Երամեան, հակառակ իր կրած ծանր յուսախաբութիւններուն եւ մանաւանդ՝ ազգին կրած դժբախտութիւններուն, անչէջ պահած է իր սրտին մէջ գալիքի յոյսը ու հաւատքով ալ նայած է դէպի լուսաշող Արշալոյսը մեր դժբախտ ցեղին:

Թեեւ ան Վանի մէջ գոյութիւն ունեցող Պօղոսեան-Ապօղոսեան պայթարին չմիացաւ ազատականներուն՝ հրիմեան, Փորթուզալեան



եւ միւսներուն, այլ մնաց պահպանողական Պօղոսեաններու կողքին, որոնք կը կազմէին վաճառական հարուստ դասակարգը եւ մղոններով հեռու էին ազատական եւ յեղափոխական մտածողութենէն: Բայց եւ այնպէս, ի վերջոյ ողջունեց այն ազատութեան գաղափարը որ հետզհետէ կ'արմատաւորուէր Վանի մէջ եւ իր շուրջ կը հաւաքէր երիտասարդութիւնը:

Իր «Յուշարձան»էն կը քաղենք պարբերութիւն մը, ուր բաւական է ցոյց տալու համար իր տաքուկ հայրենասիրութիւնը եւ հաւատքի մարդու նկարագիրը: Ան պէտք չունէր տեսնելու այդ հայրենասիրական մթնոլորտը իր աչքերով, այլ ան կը զգար իր ջերմ հոգիէն ներս:

«Եթէ շնորհէ ինձ երկինք՝ գործիս տպագրութիւնը տեսնելէ յետոյ անգա՛մ մը եւս շնչել Հայաստանի կենսատուր օդը, ինձ նախասահմանուած օրերը պիտի վերջանա՛ն արդեօք, թէ տակաւին երջանկառիչ»

պատեհութիւններ պիտի ընծայուին ինձ նաեւ իմ ծառայութեանս դոյզն բաժինը նուիրել Հայաստանի վերաշինութեան սուրբ գործին: Իսկ եթէ պիտի շնորհուի՞ ինձ տակաւին տեսնել օր մը մեր սիրեցեալ Վան-Վասպուրականը ու վերականգնել նաեւ վարժարանիս աներակները, ինչպէս կը գրեն եւ կը մաղթեն ինձ աշակերտներ ու հայրենակիցներ, այն ատեն անպատում երջանկութեամբ առջուն պիտի մրմնջեմ ես ալ. «Արդ, արձակեա՛ զծառայս քո ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն մերոյս Իսրայելի»:

Ափսոս որ չվայելեց իր ծրագրած այդ երանութիւնը, ու ոչ միայն չկրցաւ լծուիլ իր պաշտելի հայրենիքին՝ խորհրդային Հայաստանի վերաշինութեան սուրբ գործին, այլ եւ չարժանացաւ իր անլոյս աչքերը փակելու հոն, եթէ ոչ իր վերականգնած սիրական վարժարանին առջեւ, գոնէ անոր աներակներուն տակ ...: Ասիկա իր վերջին երջանկութիւնը եւ ցանկալի խաղաղութիւնը պիտի ըլլար, որուն չարժանացաւ դժբախտաբար:

Բայց ան մեռաւ, բարեբախտաբար տեսնելէ ետք իր վերջին երկասիրութեան տպագրութիւնը, ու մեռաւ անոր դէպի առջեւ, թերեւս անոր ծանրութեան տակ ...:

Մեռաւ Դեկտեմբեր 20, 1929ին Աղեքսանդրիոյ Գան տը Սեզարի իր բնակարանին մէջ, գրեթէ անակընկալօրէն: Վանէն հեռու ան թափառեցաւ: Անցաւ Եգիպտոս, ուր Աղեքսանդրիոյ եւ Բոր-Սայիտի հայկական գաղթավայրերու մէջ շարունակեց մնալ հայ կրթական մշակը: Մի՛շտ ու անընդհատ գործեց մինչեւ իր խոր ծերութիւնը:

Մեռաւ հանգիստ սրտով. գէթ իր «Յուշարձան»ը յանձնած ըլլալով:

Նիւ Եռքք

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հեղինակ՝ ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՅԱՆ ԹՈՒԹԻԿԵԱՆ

Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի Գործադիր Տնօրէն, բազմաժամանակ հովիւ, համալսարաններու դասախօս, յօդուածագիր ու հեղինակ՝ Վեր. Վահան Թութիկեանի արտատրած 37-րդ հատորը՝ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ (The Armenian Evangelical World Council) Խորագրով՝ նուիրուած է 1978-ին հիմնուած սոյն Խորհուրդին՝ որուն Գործադիր-Տնօրէնի պաշտօնը կը վարէ ներկայիս, որոշ ժամանակ մը անոր նախագահը ըլլալէ ետք: Շուրջ 400 էջեր պարունակող այս պատկերազարդ գիրքը բաղկացած է երկու հաւասար մասերէ՝ անգլերէն ու հայերէն, եւ ունի 33 գլուխ՝ իւրաքանչիւրին սեփական ծանօթագրութեամբ:

Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակի տարուան առաջին օրերուն լոյս տեսած սոյն աշխատասիրութիւնը կը ներկայացնէ Խորհուրդին գոյապատճառն ու գործունեութիւնները՝ վերջին չորս տասնամեակներու ընթացքին: Անոր հիմնադրութեան նպատակը եղած է մէկտեղել աշխարհացրիւ Հայ Աւետարանականները, զօրացնելու համար անոնց յանձնառութիւնը՝ Աստուծոյ թագաւորութեան տարածման եական պարտականութեան մէջ: Մասնաւորաբար կարիքը զգացուած է համագործակցութիւն



Վեր. Վահան Թութիկեան

ստեղծելու հետեւեալ ինքնանկախ եկեղեցական, անտարանական, ու բարեսիրական հիւնդ կազմակերպութիւններու միջեւ.՝ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութիւն, Ֆրանսայի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութիւն, Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութիւն, Ամերիկայի Հայ Աւետարա-

նական Ընկերակցութիւն, եւ Ստեփան Փիլիպոսեան Հիմնարկ:

Լիբանանի, Սուրիոյ, Յունաստանի, Ֆրանսայի եւ Միացեալ Նահանգներու մէջ գումարուած ժողովներու ընթացքին՝ ո՛չ միայն կրօնական բնոյթ կրող նիւթեր արծարծուած են, այլ որոշումներ տրուած են համազգային հարցերու նկատմամբ.՝ դատապարտութիւն Սոււրիոյի հայկական ջարդերու պատասխանատուներուն, զօրակցութիւն Հայաստանի եւ Արցախի անկախութեան, տեւական նպաստ 1988-ի աներիչ երկրաշարժի աղետեալներուն, օժանդակութիւն մայր հայրենիքի վերաշինութեան, արտագաղթի դադրեցում, կապերու սերտացում Հայրենիքի եւ Սփիւռքի միջեւ, հզօրացում Հայաստանի Հանրապետութեան՝ քաղաքական, տնտեսական, ընկերային ու հոգեւոր մարզերէն ներս:

Հայրենիքի հոգեւոր վերելքին սատարելու համար, Խորհուրդը 1994-ին նշանակեց տեւական հովիւ-առաջնորդ մը, որուն գործունեութիւնը յետագային ընդարձակուեցաւ դէպի Արցախ, Վրաստան եւ Եւրասիա: 1996-ին՝ համաշխարհային տարողութեամբ տօնուեցաւ Հայ Աւետարանական Եկեղեցիներու հիմնարկութեան 150-ամեակը՝ նախ Փարիզ, յետոյ Պոլիս ու Երեւան, Շար. էջ 14

Անժամանակ եւ կանխահաս մահ երաժիշտ, երգիչ, խմբավար եւ ուսուցիչ ԱՐԹՕ ՄԻԻՅԷՆՏԻՍԵԱՆ (1950-2015)

Հայկական ԱՊԱԳԱՅ թերթը այս վերնագրի տակ արժանի գովեստով արտայայտուած է ԱՐԹՕ ՄԻԻՅԷՆՏԻՍԵԱՆի մասին, որուն անժամանակ մահը մեծ վիշտ պատճառած էր մոնթրեալահայ շրջանակին, նաեւ երաժշտասեր օտար ժողովուրդի: Տեղին գնահատանքով խօսուած չէր սակայն իր արժանաւոր եւ վաստակաշատ հօր՝ Վահրամ Միւհէնտիսեանի, որ Պոլսոյ մէջ եղած էր մեծ անուն՝ հայ եւ թուրք երաժշտական հասարակութեան մէջ:

Արթօ-ի ծնողքը եղած են մեր ընտանեկան բարեկամները: Արթօ, Միսիթարեան վարժարանի մէջ եղած է իմ ալ աշակերտը, բայց դժբախտաբար նախակրթարանի եւ լիսէի Միսիթարեան շրջանները չէ կրցած աւարտել 11 տարիէն, ինչպէս գրուած է Ապագայ-ի մէջ: Չէր կրցած՝

նաեւ չէր ալ կրնար. Վասնզի մեր հայ վարժարանները միայն մաթեմաթիքի ճիւղ ունէին: Մինչդեռ տեղական թուրք լիսէներ կ'ունենային նաեւ գրական եւ ելմտական ճիւղեր ալ: Աշակերտը, իր ձիրքերուն ուղղութեամբ, կրնար կարգաւ որելէ ճիւղ եւ կը յաջողէր: Մեր հայ վարժարաններուն պիտո՞ճէն չէր ներքէր այս բանին եւ հայ ծնողքներու ազգասիրական սխալ գնահատանքին զոհ կ'ըլլային մեր տղոցմէն ոմանք, որոնք տարի կը կորսնցնէին կամ կանուխէն կը մտնէին գործի ասպարէզ:

Արթօ Միւհէնտիսեան Մոնթրեալ գաղթելէ ետք միայն պիտի գտներ իր յարմար գետինը: Նախապէս Հայաստանի մէջ մարզուելով, պիտի դառնար հիանալի պարիթոն մը: Պետք է իրաւունք տալ այն բարեկամներուն, որոնց կարծիքով ան

մեծ անուն կրնար դառնալ, եթէ հրեայ շրջանի մէջ ապրէր:

Սակայն իրականին մէջ ալ եղած է մեծ ու համակրելի անուն երաժշտական մարզի մէջ, իր գեղեցիկ պարիթոնի ծայնով: Ստանձնած է նուագագոյն 50 դերեր, ներառեալ «Արշակ Բ» օփերայի մէջ: Մեծ եղած է իր վաստակը ՀԲԸՄ Արմէն Քեպէք Ալեք Մանուկեան վարժարանի մէջ, որպէս երաժշտութեան ուսուցիչ եւ խմբավար, աւելի քան քառասուն տարիներ:

Իմ եւ Կարմիրեաններու անունով խորին ցաւակցութիւններ կը յայտնեմք իր հօրաքրոջ եւ որդւոյն՝ Էլիզ եւ Վաչէ Գունտագճըին, նաեւ Ալիս Չամչիքի:

ԱՐԱՅ ԿԱՐՄԻՐԵԱՆ
2 Փետրուար, 2015, Մոնթրեալ

Կայացաւ ՀՀ Սփիւռքի նախարարին կից ատեանի նիստը



Փետրուար 3-ին ՀՀ Սփիւռքի նախարարութիւնում (ՄՆ) կայացաւ նախարարին կից ատեանի 2015թ. առաջին նիստը:

Օրակարգի համաձայն ՀՀ Սփիւռքի նախարարի խորհրդական Ս. Պետրոսեանը ներկայացրեց հաշուետուութիւն՝ ՀՀ ՄՆ կողմից Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումների վերաբերեալ:

Չեկուցողը կարելորեց Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի առթիւ ընդունուած համահայկական հռչակագրի հրապարակումը՝ որպէս քաղաքական փաստաթուղթ, որի հիման վրայ նախարարութիւնը պետք է կառուցի իր հետագայ քաղաքականութիւնը: Նա մասնաւորապէս նշեց. «Այսօր ունենք աննախադէպ համախմբուածութիւն հայոց պետականութեան շուրջ, որը լուրջ հանգրուան է Ցեղասպանութեան ճանաչման, դատապարտման եւ հատուցման պահանջատիրութեան համար»:

Խօսուեց 2015թ. նախատեսուած միջոցառումների կազմակերպման, նպատակների եւ սպասուող արդիւնքների մասին:

Չեկուցողից յետոյ խօսեց ՀՀ Սփիւռքի նախարարը: Նա նշեց «Աշխարհի շատ երկրներում Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած բազմաթիւ միջոցառումներ, շարժումներ են կազմակերպուում, գիտաժողովներ են անցկացուում, գրքեր, ֆիլմեր, պաստառներ են ստեղծուում, յուշարձաններ, խաչքարեր են տեղադրուում: Ապրիլի 12-ին Հոռոմի Պապը պատարագ կը մատուցի Ցեղասպանութեան անմեղ զոհերի յիշատակին, Սեպտեմբերին կ'անցկացուի սրբադասման կարգ: Ցեղասպանութեան 100-րդ տարելիցը մեր պայքարի մեկ փուլն է: Պետք է շարունակենք մեր պայքարը «Կանք, պիտի լինենք եւ դեռ շատանանք» կարգախօսով:

Մերձաւոր եւ Միջին Արեւելքի հայ համայնքների վարչութեան պետ Լ. Ստեփանեանը ներկայացրեց հաշուետուութիւն՝ վարչութեան 2014 թուականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերեալ: Նա նշեց, որ 2014թ. ՀՀ կառավարութեան կողմից գերակայ խնդիր է ճանաչուել սփիւռքահայերի ինտեգրման ծրագիրը, որի շրջանակներում զգալի աշխատանք է կատարուել սիրիահայերի հիմնախնդիրների լուծման ուղղութեամբ, կազմակերպուել է 3 համերգ, սիրիահայերի ձեռքի աշխատանքների եւ հրուշակեղենի 8 ցուցահանդես-տոնավաճառ, 3 հաւաք-հանդիպում, սիրիահայ մանուկների համար ամառային 3 ճամբար, սիրիահայ արուեստագետների գրքերի շնորհանդէսներ:

Շաբաթ, 7 փետրուար 2015-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, տեղի ունեցաւ Ս. Խաչ-Հարպոյեան բարձրագոյն վարժարանի 4-րդ նորակառոյց յարկի բացման հանդիսութիւնը՝ բարձր հովանաւորութեամբ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ներսէս-Պետրոս ԺԹ. կաթողիկոս պատրիարքին:

Բացման հանդիսութեան պաշտօնական արարողութենէն՝ ժապաւենի հատումէն ետք, ներկայները յոտնայայ ունկնդրեցին Լիբանանի, Հայաստանի եւ Ս. Խաչ-Հարպոյեան վարժարանի քայլերգները, ապա Սոնիկ Բամպուլեանի մեկնաբանութեամբ «Ծիծեռնակ» երգին ընթացքին վարժարանին աշակերտները բեմական արտայայտութեամբ կառուցեցին Ծիծեռնակաբերդի յուշահամալիրի պատկերը:

Բացման խօսքով Գեորգ Յակոբեան ըսաւ, թէ «հարիւր տարի առաջ ծիծեռնակը բոյն կը շինէր, սակայն թուրքը փորձեց ոչնչացնել զայն:

յայտարարէ մարդակերտումի այս դարբնոցին 4-րդ նորակառոյց յարկին»: Ապա ցուցադրուեցաւ վարժարանին պատմական ու նորակերտ յարկին աշխատանքները ամփոփող տեսերիզ մը՝ Յովիկ Յակոբեանի պատրաստութեամբ:

Գեղարուեստական բաժինով, «Կիլիկիա» մաղթերգի նուագակցութիւնը կատարեցին երգեհոնի վրայ՝ Լիւսի Ղարիպեան, եւ ջութակ՝ Գեորգ Ներսէսեան: Անոր յաջորդեց ասմունք՝ «Վաղուան տունը», Սուշեղ Իշխանի համարութեամբ, կատարողութեամբ Սարին Փօլատեանի: Յակոբ Փամպուլեան եւ Սերուժ Գունճանեան հրամցուցին երաժշտական կտոր մը կիթառի նուագակցութեամբ: «Բարի արագիլ» եւ «Հայաստան» երգերով ելոյթ ունեցան Կարօ Նազգաշեան, Սերժիօ Ահարոնեան եւ Սոնիկ Փամպուլեան:

Վարժարանի տնօրէնութեան խօսքը փոխանցեց տնօրէն Ռիթա



Ռիթա Պոյաճեան, Վարուժան Ներկիզեան եւ Ներսէս Պետրոս ԺԹ Կաթողիկոս Պատրիարք

Հարիւր տարի անց, ծիծեռնակը դարձեալ բոյն կը շինէ: Ծիծեռնակը այսօր այցելած է Ս. Խաչ-Հարպոյեան բարձրագոյն վարժարան ու հայու անպարտելի կամքին դրսեւորումով պաշտօնական բացումը կը

Պոյաճեան, որ շէշտեց, թէ գիտակից ոչ մէկ հայ կրնայ ուրանալ հայ դպրոցին անզուգական դերն ու կարելորդութիւնը մեր ազգային կեանքին մէջ: Ան նշեց, որ ամեն գիտակից հայու պարտականու-

թիւնն է հայ դպրոցը պահել իր յառաջապահ դերին մէջ, իսկ այդ յառաջապահութիւնը կը կարօտի տնտեսական եւ բարոյական անվերապահ զոհողութիւններու: Վարժարանի 4-րդ յարկի պաշտօնական բացման հանդիսութիւնը պատեհ առիթ նկատելով՝ Պոյաճեան մեծապէս երախտագիտութիւն յայտնեց Ներսէս-Պետրոս ԺԹ. կաթողիկոս պատրիարքին, որուն ջանքերուն շնորհիւ կարելի եղաւ իրագործել այս հսկայական ծրագիրը, ինչպէս նաեւ այս ծրագրի յաջողութեան իր մեծածաւալ ներդրումը բերած բարերար Վարուժ Ներկիզեանին՝ համագործակցութեամբ Արաբական Միացեալ Էմիրութիւններու «Պանք օֆ Շարժ» եւ «Էմիրեյց Լեպանոն» դրամատուներուն:

4-րդ յարկի կառուցման ու արդի սարքաւորումներով կահաւորման աշխատանքներուն իր զօրակցութիւնն ու գնահատելի ներդրումը ունեցած Վարուժ Ներկիզեանի պարգեւատրումը կատարուեցաւ ձեռամբ հոգեւոր տիրոջ եւ տնօրէն Ռիթա Պոյաճեանի:

Ներկիզեան խօսք առնելով ըսաւ, թէ որեւէ եկեղեցւոյ կամ դպրոցի շինութիւնը, թէկուզ այդ ըլլայ ժամանակակաւոր, ունի իր կարելորդութիւնը: Ան նշեց, որ բոլոր հայերը դարբեր ի վեր եղած են ուսումնատենչ եւ յաջողակ անձեր, այդ

պատճառով հայերէն ձերբազատիլ ցանկացող անձեր թիրախ ընտրած են դպրոցներն ու եկեղեցիները՝ հայերը ոչնչացնելու եւ ջլատելու համար: Հետեւաբար, Ներկիզեան մեծ պատիւ զգալով իր զօրակցութիւնն ու օժանդակութիւնը մատուցած էր Ս. Խաչ-Հարպոյեան վարժարանի 4-րդ յարկի կառուցման աշխատանքներուն:

Ապա, խօսք առաւ Ներսէս-Պետրոս ԺԹ. կաթողիկոս պատրիարքը, որ ըսաւ, թէ այս տարի ձեռնարկեցին Ս. Խաչ-Հարպոյեան երկրորդական վարժարանին զարկ տալ, կառուցել եւ կահաւորել տալով վարժարանի շէնքին 4-րդ յարկը, նկատի առած ըլլալով անոր յարաճուն յաջողութիւնը եւ աշակերտութեան թիւին տարեկան աճը: Ան մաղթեց, որ վարժարանը շարունակէ գործել ի նպաստ հայ նորահաս սերունդներու լաւագոյն ուսումնառութեան՝ իրենց կրթական առաքելութեան զուգահեռ ապահովելով նաեւ նորահաս սերունդներուն դաստիարակութիւնը՝ քրիստոնէական, ազգային եւ մարդկային այն արժէքներով, որոնք զիրենք կ'առաջնորդեն դէպի յուսատու եւ փայլուն ապագայ:

Հանդիսութիւնը աւարտին հասաւ Ներսէս-Պետրոս ԺԹ. կաթողիկոս պատրիարքի պահպանիչով եւ Տերունական աղօթքով:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

Յայ մարզիկի մը մարզական յաջողութիւնները

Յրայր Տաղաւարեան տասնեակ տարիներով հետեւած է մարմնամարզութեան ու աթլետիկայի: Յետաքրքրական հարցազրոյց մը ունեցանք իր տանը մէջ զոր կ'ուզենք ներկայացնել ընթերցողներուն: Ստորեւ՝ մեր հարցազրոյցին կարեւոր բաժինները:

Յարց :- Կրնայի՞ք համառօտ ներկայացում մը ընել ձեր մասին:

Պատ. :- Անունս Յրայր Տաղաւարեան է, ծնած Եթովպիա 1936-ին: Յաճախած եմ տեղական Գալուստեան Ազգային Վարժարանը մինչեւ 5-րդ դասարան, ապա տեղափոխուած եմ Իսմայիլիա քաղաքը ուր ուսումս աւարտելէ յետոյ Մայիս 1957-էն սկսեալ, բազմաթիւ լեզուներ տիրապետելու պատճառաւ, Կազայի մէջ Միացեալ Ազգերու կազմակերպութեան հետ աշխատեցայ իբր dactylograph: Մարմնամարզութեան հանդէպ սերս արթնցած է պատանեկան օրերս երբ մարզանքի ուսուցիչ ունեցած եմ մարմնակրթանքի մասնագետ՝ Արարատ Քրիսեանը: Ան է որ իմ մէջս մտցուցած է աթլետիկայի սերը: 15.5 տարեկանս սկսայ պասքէթպոլ խաղալ, 17 տարեկանիս մասնակցեցայ պասքէթպոլի ախոյանական մրցումներու եւ այդ երիտասարդ տարիքին, մեր Ֆրանքօ-Իթալիէն խումբի հետ եղանք Champion du Canal de Suezի: 1962-ին Փանատա հաստատուեցանք ու մեկդի թողուցի բոլոր մարզական պարապումներս ու զբաղուեցայ աշխատանքով եւ առօրեայ կեանքով: Միայն 51 տարեկանս յետոյ է որ սկսայ մարմնամարզական աշխուժութեան:



Հրայր Տաղաւարեան մետալներով ու բաժակներով լեցուն սենեակին մէջ

Յարց :- Որեւէ Յայկական մարզական մասնակցութիւն ունեցա՞ծ էք Եգիպտոսի մէջ:

Պատ. :- Ընդհանրապէս օտար շրջանակի մէջ եղած եմ, միայն մեկ առիթով է որ մեր Պասքէթպոլի խումբը մրցեցաւ ՀՍՀՄ Նուպարի՝ Յայկական խումբերու մէջ ախոյեան եւ Եգիպտոսի առաջնակարգ խումբերէն նկատուող հաւաքականին դէմ: Չարմանալիօրէն աւարտական արդիւնքը եղաւ 21 կետ տարբերութեամբ ի նպաստ մեր խումբին:

Յարց :- Ինչ մարզածներու մէջ է որ սկսաք պարապիլ:

Պատ. :- Սկսայ մարզուիլ ու մրցիլ զանազան մարմնամարզական ձեւերուն մէջ, որոնց կարգին 60մ, 100մ, 200մ եւ 400մ կարճ վազքեր, 800մ եւ 1500մ միջին երկարութեամբ վազքեր, 5000մ եւ 10 000մ երկար վազքերէն մինչեւ մարաթոն, Նոյնպէս գունտի արձակում, հեռացատկ ու եռացատկ: Պետք է ընթերցողներուն յստակացնեմ թէ մրցակցութիւնը միշտ Նոյն տարիքը ունեցող մարզիկներու միջեւ կ'ըլլայ, որը սակայն բնաւ չի նշանակեր բացակայութիւն մրցունակութեան, կամ ալ բարձրագոյն մակարդակի մարզիկներու:

Յարց :- Այս ամէնը ինչպէ՞ս սկսաւ:

Պատ. :- Շատ զօրաւոր ծխող եւ բարձր կշիռ ունեցող անձ մը եղած եմ մինչեւ 50 տարեկան: Երբ զգացի առողջութեան վատթարացում, այդ ատեն է որ որոշեցի վազել սկսիլ: 53 տարեկանիս սկսայ փողոցները վազել, մարզուիլ ու մրցումներու մասնակցիլ. այսպէսով է որ սկսաւ յաղթանակներու երկայն շարքը: Ըսեմ նաեւ թէ բոլոր մրցաշարքերուն շապիկիս վրայ հպարտութեամբ կրած եմ Յայկական եռագոյնը: Բոլորին ալ ըսած եմ իմ ազգութեանս մասին ու պատիւով ներկայացուցած եմ ազգս:

Յարց :- Կրնայի՞ք մանրամասնել ձեր յաղթանակները:

Պատ. :- Յաղթանակ մը ապահովելու համար պայման է որ աղիւսակին առաջին երեք դիրքերէն մին ըլլաս, այն ատեն է որ

անունդ կ'արձանագրուի իբրեւ յաղթական: Շահած եմ 482 մետայլ ու 38 բաժակներ: Մասնակցած եմ նաեւ 5 մարաթոնի, որոնցմէ 4 հատը Մոնթրէալ ու հատ մըն ալ Նիւ Եորք:

Յարց :- Մասնակցա՞ծ էք Մոնթրէալի Յայկական խումբերու կամ ողիմպիական խաղերու:

Պատ. :- Կրնայի պասքէթպոլի Յայկական խումբի մը հետ մասնակցիլ, սակայն առիթը չ'ստացուեցաւ: Ըստ ինձ Եգիպտոսի լաւագոյն պասքէթպոլիստը Սեպուհ Գրմաճեանն էր, առիթը ունէի իր հետ Բարեգործականի խումբէն խաղալ, բայց այդ ալ չ'եղաւ: Յայկական ողիմպիական խաղերու ալ չեմ մասնակցած:

Յարց :- Մինչեւ եր՞բ այսպէս մարզանքի նուիրուեցաք ու մրցումներու մասնակցեցաք:

Պատ. :- Մինչեւ Մարտ 2013, որմէ յետոյ Դեկտեմբեր 2013-ին ողնայարի լուրջ գործողութեան մը ենթարկուեցայ եւ այսպէսով վերջ գտաւ իմ մարզական տեսիլքը:

Մեր հարցազրոյցը աւարտած էր, ինձ միայն կը մնար հիացումով նայիլ եւ ուսումնասիրել Յրայրի trophy room-ի չորս պատերէն կախուած հարիւրաւոր մետալներն ու մրցանակները: Այդ որքան ճիգ ու քրտինք է թափուած ամէն մեկի համար: Վարձքդ կատար հայու անունը պանծացնող մարզիկ Յրայր: **Ա.Պ.Ս.**

Շարժանկար Յնդկաստանի Յայ Թագուհիին Մասին, Որու Յիշատակին Կառուցուած է Թաժ Մահալը

Orer.am-ի տեղեկութիւններով վերջերս Երեւանէն Յնդկաստան մեկնած է շարժապատկեր նկարահանող խումբ մը՝ Ազրա քաղաքին մէջ գտնուող աշխարհահռչակ Թաժ Մահալի տաճարի մասին շարժանկար պատրաստելու նպատակով: Ըստ կարգ մը պատմական աղբիւրներու, Յնդկաստանի Շահ Ճահան արքայի կինը, որուն յիշատակին ան կառուցած է Թաժ Մահալը, հայուհի եղած է:



ցաղրութիւնը, հաւանաբար, տեղի ունենայ 14 Փետրուարին: Ո՞վ է Մումթազ Մահալ Սերկէյ Աւագեան իր «Նշանաւոր Յայուհիներ» գիրքին մէջ կը նշէ, որ Մումթազ Մահալը (Յեղինէն) ծնած է 1593 թուականին հնդկական արքունիքի հայազգի պաշտօնեայ Ասաֆ խանի ընտանիքին մէջ: Չինք նաեւ անուանած են Արճում անտ Պանօ Պեկում: Ստացած է ժամանակի հիմնական կրթութիւն, ունեցած է կանացի նրբագեղութիւն, գեղեցկութիւն եւ եղած է բաւական նրբանկատ: Յօր պաշտօնին պատճառով մօտ եղած է հնդկական արքունիքին: 1612ին, գահաժառանգ խուրամի խան կ'ամուսնանայ անոր հետ: 1627 թուականին գահաժառանգ խուրամի խանը կը դառնայ Յնդկաստանի թագաւոր: Թագադրութենէն ետք

խուրամի խանը կ'անուանափոխուի եւ կը կոչուի Շահ Ճահան: Յնդկաստանի հայուհի թագուհի Մումթազ Մահալ իր մահկանացուն կնքած է 38 տարեկանին, 1631 թուականին, Յնդկաստանի Պուրհան բնակավայրին մէջ, ուր հողին յանձնուած է: Սակայն քիչ ժամանակ ետք անոր աճիւնը տեղափոխուած է Ազրա եւ հողին յանձնուած Ճամա գետի ափին: Այստեղ թագաւոր ամուսին Շահ Ճահանը իր սիրեցեալ թագուհիին գերեզմանին վրայ կը կառուցէ (1630-1652) աշխարհահռչակ մզկիթ դամբարանը՝ Թաժ Մահալը: Թաժ Մահալ հայերէն կը նշանակէ «Թագի պալատ»: Բանաստեղծները զայն՝ կ'անուանեն «Մարդկային սիրոյ յուշարձան», նաեւ «Քարէն կերտուած բանաստեղծութիւն»: Ծանօթ աշխարհագրագետ Կամսար Աւետիսեանը «Պատանի աշխարհագրագետ» գիրքին մէջ (Երեւան, 1985) կը գրէ, որ 1630 թուականին Մումթազ Մահալ կ'ուղեկցի թագաւոր ամուսնուն պատերազմի մէջ, ռազմի դաշտին վրայ կը հիւանդանայ: Բժիշկները անկարող կ'ըլլան փրկելու անոր կեանքը: Մահամերձ վիճակի մէջ ան ամուսինէն կը խնդրէ իր գերեզմանին վրայ կառուցել տաճար: Որոշ պատմաբաններ կը հերքեն Մումթազ Մահալի հայուհի ըլլալու փաստը: Կարգ մը գիտնականներ կ'ըսեն, թէ Մումթազ կը շփոթուի մոնկոլներու մէկ այլ թագուհիի հետ, որ իրապէս, հայկական ծագում ունէր եւ, որուն ժամանակի պատմաբանները կոչած են Մարիամ Պեկում Մահիրա:

Վերապրողները կը վանկարկեն, որ ապրողները ու Նահատակները կոտորածներու վկաներն են

«ALL NEWS» արաբական կայքէջին մէջ Սու-
հանատ Էլ Յաճ Ալին գրած է պատմութիւնը 104-
ամեայ կնոջ մը՝ սուրիացի փախստական Քենե
Ֆատոյի, որ այժմ կը գտնուի Իրաքի «Տոմիզ»
քրտական ճամբարին մէջ: Այս մասին կը հա-
ղորդէ Hayernaysor.am-ը:

Յոյն լուսանկարիչ Եասոն Աղանասիաս, պատ-
մութիւնը լուսանկարած ու գրի առած է: Քենե
Ֆատո եղած է հայ քրիստոնէայ, երբ կրցած է
1915թ. ցեղասպանութենէն փրկուիլ եւ հասնիլ
սուրիական Յասիչէ Նահանգ, միայնակ դիմա-
կայելով փշոտ ճանապարհի դժուարութիւնները
անցած է բազմաթիւ քիւլմեթրեր մինչեւ հասած է
իշխելու Նահանգը:

Սուրիական այդ քրտաբնակ Նահանգին մէջ,
քիւրտ իսլամ ընտանիք մը որդեգրած է Քենե
Ֆատոն, որ ապրած է թշուառ օրեր, սուրիական
արիւնոտ յեղափոխութիւնը, հակամարտու-
թիւնները ստիպած են Քենեի որդիին գաղթել, ան
նմբակոծութիւններէն փախչելով, մայրը կռնա-



կին շարժած քալած է մինչեւ քրտական ճամ-
բար, անցնելով իր Նախնիներու գաղթի ճանա-
պարհէն.. Անոնք ապահով տեղ կը հասնին, բայց
արդէն գաղթերէն զայրացած՝ ըլլան օսմանական
թէ սուրիական, Քենե ամէն օր տուն վերադառնալ
կ'ուզէ, այս մասին յոյն լուսանկարիչին պատմած

Է անոր որդին, յայտնելով որ իր մայրը մէկ դար
տաժանագին կեանք ունենալէ ետք, ճակա-
տագիրը այնպէս եղած է, որ կեանքի վերջին
տարիներն ալ ան դարձեալ ապրի փախստա-
կանի կարգավիճակով եւ ճամբարի մէջ:

Յոյն Եասոն Նկարագրած է, ըսելով, որ այս կի-
նը կը ներկայացնէ 3 ժողովուրդներու 20 եւ 21-
րդ դարերու տառապանքները, ան հայուհի
ըլլալով, կը խօսի քրտերէն եւ Սուրիոյ քաղա-
քացի է, ամբողջ դար մը ապրած է չարչարանքով
լի կեանք մը, որ սկսած է Հայոց Ցեղասպա-
նութեամբ, անցնելով քրտական մեկուսացումով,
եւ այսօր կ'ապրի քրտական «Տոմիզ» ճամբարին
մէջ: Կեանքը սկսաւ եւ կ'աւարտէ արտաքսմամբ
եւ կողոպուտով:

Եասոն պատմութեան աւարտին գրած է,
«Վերապրողները կը վանկարկեն, որ ապրողներն
ու Նահատակները կոտորածներու վկաներն
են»:

Գայուշ Զալըքման-Կալրիլօֆ. «Թուրքերը պետք է պատմութեան ամօթը մաքրեն»

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Գայուշ Զալըքման-Կալրիլօֆ Պո-
լիս ապրող հայ կին քաղաքական
գործիչ է: Ան Թուրքիոյ քաղա-
քական կեանքին սկսած է մասնակ-
ցիլ Նախ անդամակցելով Խաղաղու-
թիւն եւ Ժողովրդավարութիւն Կու-
սակցութեան (Baris ve Demokrasi
Partisi), որուն հետ բաւական եր-
կար ճամբայ կտրած է: Գայուշ Զա-
լըքման ներկայիս մաս կը կազմէ
քրտամտ HDP (Halklarin Demok-
ratik Partisi) կուսակցութեան, որուն
միացած են քիւրտեր, յոյներ, ալե-
լիներ, ասորիներ եւ հայեր: Վերջերս
կուսակցութեան շարքերը համա-
լըրուած են աշխատաւորական
տարբեր սենտիքաներու անդամ-
ներով, քրտական փոքր խմբակցու-
թիւններով եւ հայկական «Նոր Զար-
թօնք» կազմակերպութեամբ: Զա-
լըքման կ'ըսէ, որ կուսակցութիւնը
ներկայիս կը ղեկավարուի թիրքմէն
առաջնորդով մը, որ իր ըսելով հա-
յասէր անձնաւորութիւն է: Անոր
հետ կատարուած այս հարցազրոյցը
Հրանդ Տիւնքի Նահատակութեան 8-
րդ տարեկիցին ընդառաջ: Կարելի է
ըսել, որ հարցազրոյցին միջոցաւ
կարելի եղաւ արծարծել այսօր
Պոլիս ապրող հայ հասարակութեան
հիմնական օրակարգերը եւ Հայոց
Ցեղասպանութեան 100-ամեակէն
ամիսներ առաջ այնտեղ տիրող ընդ-
հանուր մթնոլորտը:



րելի կ'ըլլայ ժողովուրդը միջոցի մը
համար զբաղեցնել: Այս իրավիճակը
միայն Հրանդ Տիւնքի սպանութեան
համար ի գօրու չէ', այլ թուրք ժո-
ղովուրդին համար ալ յաճախ փոր-
ձըւած, ծանօթ իրողութիւն մը: Ան-
լոյծ սպանութիւններով լեցուն է պետու-
թեան արդարութեան տեսլողը: Երեկ
օրինակ հարիւրաւոր մայրեր, կի-
ներ, քոյրեր 512-րդ անգամ ըլլալով
Կալաթասարայի մայրերու վրայ
արդարութիւն փնտռեցին: Անոնք
անյայտ ձեւով կորսնցուցած են
իրենց ամուսինները, զաւակները եւ
կամ եղբայրները: Անոնք երկու բան
կ'ուզեն, Նախ իրենց հարազատ-
ներուն դիակները գտնել եւ յետոյ
ոճրագործները բացայայտել: Այս
երկրին մէջ տասնեակներով լրագ-
րողներ, մտաւորականներ, քաղա-
քական գործիչներ զոհ գացած են
եւ սպանութիւններուն ոճրագործը մնա-
ցած է անյայտ: Հրանդ Տիւնքի ցաւը
դեռ շատ տաք էր, երբ Սեւակ Պա-
լըքմին զոհ տուին: Ի՞նչ ըրաւ պե-
տութիւնը, ոչինչ: Սամաթիոյ մէջ հայ
կիներ հալածուեցան, Մարիճա
Քիւլիքը սպանուեցաւ, ի՞նչ ըրին:
Դարձեալ ոչինչ: Կարծես մեր քօին
խնդալով խեղճ հայ մը ոճրագործ
«սարքեցին»: Ինչ որ ըսեք ի զուր է,
այս բոլորը իրերայաջորդ դէպքեր
են: Եթէ մէկը լուծուէր, ոճրագործ-
ները գտնուէին, միւսներն ալ կը
լուծուէին: Թուրքիա իր քաղաքա-
կանութիւնը կայացուցեր է ուրա-
ցումի եւ ժխտումի հիմերու վրայ:
Այս իրավիճակը ճիշդ այդ քաղաքա-

կանութեան հետեւանքն է եւ ան-
շուշտ արմատ առած է Օսմանեան
Կայսրութեան ժամանակ կատար-
ուած ցեղասպանութիւններուն վրայ:

- Հրանդի սպանութեան գործի
ամբողջական բացայայտումը տա-
կալին չէ կատարուած: Այդ գործին
առընթեր երեւելի դարձած անուն-
ները արդեօք իրական պատուիրա-
տուներն են: Եթէ չեն, ապա Թուր-
քիոյ իշխանութիւնները ինչքանով
անկեղծ են գործին ամբողջական
ծալքերը բացայայտելուն առընթեր:
Մանաւանդ, որ ամէն հանգրուանի
նոր անուններու եւ ձեռքակալում-
ներու մասին ականատես կ'ըլլանք:

- Իմ կարծիքով այդ անունները
անշուշտ գործին մէջն էին, բայց
բնականաբար չենք կրնար ըսել թէ
բուն պատուիրատուներն են, քանի
որ արդէն գիտենք ով է բուն իրա-
մանատուն: Իշխանութիւնը իրեն
պետք եղած չափով եւ ժամանակա-
միջոցի մէջ օգտագործեց զիրենք,
հիմա կ'երեւի այլեւս պիտանի չեն,
որ կրցաւ անոնց անունը յայտա-
բարել: Անշուշտ ներկայ պայմաննե-
րուն պետք չէ զանց առնել Զիզրէի
(Սուրիոյ հետ սահմանային շրջանին
մօտ գտնուող թրքական քաղաք)
դէպքերու ազդեցութիւնը յատկա-
պէս Էրճան Տեմիրի անուան յայտ-
նաբերման շուրջ: - Իսկ ո՞վ է Էրճան
Տեմիրը:

- Ան Տիւնքի սպանութեան օրերուն
կը պաշտօնավարէր Տրապիզոնի
մէջ, իսկ ներկայիս Պոթան Նահանգի
Զիզրէ քաղաքի ոստիկանապետն է:
Իր պաշտօնը ստանձնելէ ի վեր այդ
շրջանին մէջ 6 երեխայ սպաննը-
ւեցաւ: Եթէ Հրանդ այսօր ողջ ըլլար,
ի՞նչ պիտի ըլլար անոր ամենէն կա-
րելոր օրակարգը:

- Այս հարցումին կարելի չէ պա-
տասխանել: Յանդակութիւն կը նկա-
տեմ մէկու մը ընելիքներուն, խօսե-
լիքներուն մասին (երեւակայական)
կարծիք յայտնելը, մանաւանդ որ
ինքը չկայ եւ հերքելը անկարելի է:
Կան մարդիկ, որոնք շատ կը սիրեն
ամէն ինչի մասին կարծիք յայտնել
ակնարկելով՝ Հրանդ Տիւնքին: Մար-
դոց մտածելակերպը տարուէ տարի
կրնայ փոխուիլ, եթէ նոյնիսկ շատ

մօտ ես տուեալ անձի մը, չես կրնար
գիտնալ թէ այսինչ նիւթին մասին
ինչպէ՞ս կրնար ըլլալ անոր դիրք-
որոշումը: Կրնամ ըսել միայն, թէ ինք
անտարբեր պիտի չմնար ցեղասպա-
նութեան հարիւրամեակի ընդհա-
նուր մթնոլորտէն:

- Մինչեւ այս պահը Հրանդ ամ-
բողջութեամբ չէ հասկցուած եւ
սփիւռքի եւ Հայաստանի մէջ: Հրանդ
կը խօսէր թուրքին հանդէպ առկայ
ատելութիւնը մէկ կողմ դնելու եւ հայ
թուրք խնդիրներու տարբեր հայ-
եացքով նայելու մասին: Հայեացք
մը, որ անցեալը չմոռնալով եւ չու-
րանալով հանդերձ նոր մղում պիտի
տար իր ձեւակերպմամբ «Երկու մօտ
ժողովուրդ-երկու հեռու հարեւան»
ժողովուրդներուն: Ի՞նչ կը մտածէք
այս առումով:

- Այո, այս ձեր ակնարկածը ամե-
նէն յատկանշական կողմն էր իր
մտածելակերպին: Իսկապէս ալ այս
երկու ժողովուրդները բաւականին
մօտ են իրարու, բայց այս իրակա-
նութենէն տեղեակ չեն, որովհետեւ
գիրար չեն ճանչնար: Թուրքերը
արդէն նպատակ ալ չունին ճանչ-
նալու եւ անշուշտ հաշտուելու: Հա-
րիւրաւոր տարիներու ընթացքին
պետական քաղաքականութիւնը
մեծապէս օժանդակած է այս իրո-
ղութեան: Ես բացարձակապէս չեմ
հաւատար, որ այս երկու ժողո-
վուրդները կը հաշտուին: Հաշտու-
թեան պայմանները չեն գոյացած եւ
պիտի չգոյանան: Մանաւանդ այս
իշխանութիւններուն հետ, որոնք
դարերու ընթացքին իրենց գոյու-
թիւնը պահպանած քաղաքական
մտայնութեան մը հետեւորդներ են:

- Ցեղասպանութեան 100-ամեա-
կին ընդառաջ կարծեք հայ եւ թուրք
«երկխօսութիւնը» միայն կեղծուա-
ցած է Նախագահներ՝ Սերժ Սար-
գսեանի եւ Ռեճեփ Թայյիպ Էրտո-
ղանի միջեւ եղած եւ հրապարակ-
ւած Նամակագրութեամբ: Ատկէ
դուրս Սփիւռքի (որպէս իրաւաւոր
արեւմտահայութիւն) եւ Հայաստանի
քաղաքացիներուն կողմէ, որեւէ
բացայայտ կամ ընթացքներուն նոր
մղում տուող երկխօսութիւն» չկայ:

Թուրքիոյ մէջ լոյս տեսաւ Յեղասպանութեան մասին նոր հատոր մը

Թուրքիոյ մէջ նոր գիրք մը լոյս տեսած է Հայոց Յեղասպանութեան մասին: Յոն Ներկայացուած են Տիգրանակերտի մէջ տեղի ունեցած կոտորածները՝ հիմնուած ականատեսներու վկայութեան վրայ:

Ըստ թրքական «Հապերլեր» կայքէջին, գիրքին հեղինակները՝ Ատնան Չելիք եւ Նամըք Քեմալ Տինչ «100-ամեայ ողբ: Հանրութեան յիշողութեան հետքերով: 1915, Տիպարալէքի» խորագրեալ գիրքին մէջ հաւաքած են Յեղասպանութեան ականատեսներու վկայութիւններ:

Ատնան Չելիք նշած է, թէ Քիւրտերը եւս մասնակցած են Յեղասպանութեան, սակայն շեշտած է, որ սխալ պիտի ըլլայ ըսելը, թէ Քիւրտերն են, որոնք Յեղասպանութիւնը գործեցին, քանի որ բազմաթիւ վկայութիւններ կան այն մասին, որ Քիւրտերը նաեւ Հայեր փրկած են:

Վիրահայերու քաղաքացիութեան հետ կապուած խնդիրները լուծելու փորձերը կը շարունակուին



Վրաստանի խորհրդարանի նախագահ Դաւիթ Ուսուպաշվիլին այս ամիս պիտի այցելէ Հայաստան, կը հաղորդէ «Ազատութիւն» ծայնասփիւռի կայանը՝ վկայակոչելով «Կրուզիա օնլայն»-ը:

Ըստ վրացական համացանցային պարբերականին՝ այցը նախատեսուած էր Փետրուար 1-ին, բայց յետաձգուած է Ուսուպաշվիլիի հիւանդութեան պատճառով:

Վերջին մէկ-երկու օրերուն Վրաստանի պաշտօնեաները հանդիպումներ կ'ունենան վրացահայ համայնքի ներկայացուցիչներուն հետ: Ախալքալաքի, Նինոծմինտայի եւ Ծալկայի շրջաններու տեղական ինքնակառավարման մարմիններու, հասարակական կազմակերպութիւններու եւ տեղական մամուլի ներկայացուցիչներու հետ հանդիպած են երկրի կրթութեան, առողջապահութեան, գիւղատնտեսութեան նախարարները: Հայ համայնքի ներկայացուցիչները մասնակցած են քաղաքացիական ընդելուզման եւ մարդու իրաւունքներու հարցերով խորհրդարանական յանձնաժողովի նիստին, զանոնք ընդունած է նաեւ Վրաստանի խորհրդարանի նախագահը:

Ուսուպաշվիլիի հետ հանդիպման մասնակցած «Բազմազգ Վրաստան» ոչ կառավարական կազմակերպութեան ղեկավար Աննա Ստեփանեանը «Ազատութեան» հետ զրոյցի ընթացքին փոխանցած է, որ շատ հետաքրքիր քննարկում տեղի ունեցած է, շարք մը հարցեր բարձ-

րացուցած են, մասնաւորապէս՝ Վրաստանի քաղաքացիութենէն զրկուած մարդոց խնդիրը:

Այս խնդիրը յառաջացած է անցեալ տարուան Սեպտեմբերէն, երբ Վրաստանի մէջ ուժի մէջ մտաւ օտարերկրացիներուն վիզա տրամադրելու նոր կարգը: Յատկապէս Ախալքալաքի շրջանի հայերը, որոնց մէջ մեծ թիւ կը կազմեն Ռուսիա արտագնայ աշխատանքի մեկնողները, Ռուսաստանի մէջ առանց խնդիրներու մնալու, աշխատելու համար ձեռք կը բերեն Ռուսիոյ կամ Հայաստանի քաղաքացիութիւն եւ այդ պատճառով կը զրկուին Վրաստանի քաղաքացիութենէն: Փաստօրէն, Վրաստանի բնակիչը կը դառնայ օտարերկրացի եւ հայրենիքի մէջ, իր տունը մնալու համար արդէն վիզա պետք կ'ունենայ:

Աննա Ստեփանեանի փոխանցմամբ՝ խորհրդարանի նախագահին հետ հանդիպումի ընթացքին կողմերը համաձայնած են, որ ատիկա անյարմարութիւններ կը ստեղծէ վրացահայ քաղաքացիներու կամ նախկին քաղաքացիներու համար, եւ պետք է այնպիսի լուծում գտնել, որ մարդիկ կարենան ապրիլ իրենց տունը:

«Որքան մենք հասկացանք՝ իշխանութիւնները հիմա աշխատում են այդ խնդիրը լուծելու ուղղութեամբ: Հաւանաբար մօտ ապագայում մենք կը տեսնենք հարցի լուծումը», - ըսած է «Բազմազգ Վրաստան»-ի ղեկավարը:

Ամէտ Թիւրքի... Շար. էջ 2-էն

հարկադրութեամբ պիտի մասնակցինք ՀԵ-ՏԵ-ՓԵԻ ընտրութիւններուն: Այսօր մաքառումներէ եւ կորուստներէ ետք եթէ ընտրութեան պատնէջը չանցնինք, ատիկա պիտի նշանակէ մեր նահատակներուն դէմ կատարուած անարգանք եւ որպէս

սեւ մուր՝ պիտի մնայ մեր ճակտին վրայ: Ընտրութեան պատնէջը եթէ չկարողանանք անցնիլ, ատոր հետեւանքները պիտի կրէ պետութիւնը: Այն ատեն մենք պիտի ստիպուինք մեր ճակատագիրը մեր ձեռքով կերտել:

Ատկէ անդին պատահելիքներուն մասին թող պետութիւնը մտածէ՝ ըսաւ Թիւրք:

«Մարմարա»

Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած գիրքի շնորհանդէս՝ Սպանիոյ մէջ



Մատրիտի մէջ՝ Փետրուար 11-ին, տեղի ունեցած է «Արարատի յիշողութիւնը. ամենամոռցուած ճեղասպանութեան 100 տարին» գիրքի շնորհանդէսը:

NEWS.am-ի փոխանցմամբ՝ հեղինակը յայտնի գրող, լրագրող, շարք մը գիրքերու, յօդուածներու եւ հեռուստահաղորդումներու հեղինակ Հաւեր Մորթն է: 2002-ին իր «Գաղտնի կղզի. Իսլանդա» աշխատութեան համար արժանացած է Մեծ ճանապարհորդներ գրական մրցանակին:

«Արարատի յիշողութիւնը. ամենամոռցուած ճեղասպանութեան 100 տարին» գիրքը բաղկացած է 270 էջէ: Գիրքը զուտ պատմական իրադարձութիւններու շարադրում չէ:

Ճանապարհորդական նշումներու ոճով գրուած պատմութեան մէջ հեղինակը ընթերցողին կը ներկայացնէ իր եւ իր լուսանկարիչ ընկերոջ ճանապարհորդութիւնը Հայաստան եւ Արցախ: Ընդգծելով, որ Հայոց Յեղասպանութեան մասին յիշողութիւններուն կարելի է հանդիպիլ գրեթէ ամէն հայ ընտանիքի մէջ, հեղինակը իր հիացմունքը յայտնած է առ այն, որ հայ ժողովուրդը, չնայած կրած անմարդկային տառապանքներուն, իր մէջ ուժ գտաւ վերածնունդ ապրելու, կերտելու անկախ պետականութիւն եւ պահպանելու իր հարուստ հոգեւոր ժառանգութիւնը ինչպէս Հայաստանի, այնպէս ալ Սփիւռքի մէջ: Գիրքի վերջաբանին մէջ հեղինակը կը նշէ. «Այո, դժուար է գտնել աշխարհի մէջ այլ ազգ մը, որ այդքան ցրուած է, բայց այդչափ միահամուռ եւ արմատներուն կառչած: Ե՛րբ կ'ըսեն, որ ուր ալ հայը գտնէ հայուն կը ստեղծէ նոր Հայաստան մը»:

Հայ Աւետարանական... Շար. էջ 5-էն

ուր հանդիսութիւնը միջ-եկեղեցական դարձաւ շնորհիւ երջանկայիշատակ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայութեան եւ սրտաբուխ պատգամին:

1997-ին Երեւանի մէջ հիմնուեցաւ Հայ Աւետարանական Աստուածաբանական Գեմարան մը: Երկու տարի ետք՝ խորհուրդը մասնակցեցաւ Հայաստան-Սփիւռք Ա. Խորհրդրդաժողովին, իսկ 2001-ին՝ Հայաստանի մէջ քրիստոնէութեան իբր պետական կրօն հռչակման 1700-ամեակի պաշտօնական տօնակատարութեան: 2002-ին Խորհուրդին միացան Հայաստանի ու Եւրասիոյ Հայ Աւետարանական Եկեղեցիները: 2003-ին կազմակերպուեցաւ Հայ Աւետարանական Հովիւներու Ա. Համաշխարհային Համագումարը՝ Ֆրանսայի մէջ, հրատարակուեցաւ երկար ատենէ ի վեր սպասուած Հովուական Ձեռագիրքը, ինչպէս նաեւ արդի արեւելահայերէն նոր Կտակարանը:

2006-ին Երեւանի մէջ գումարուեցաւ Համահայ Աւետարանական Համագումար մը, ու տօնուեցաւ Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցւոյ հիմնադրութեան 160-ամեակը: 2011-ին Խորհուրդը դարձեալ մասնակցեցաւ Հայաստան-Սփիւռք Խորհրդաժողովին եւ Հայաստանի Գ. Հանրապետութեան 20-ամեակի հանդիսութեանը: Նմա-

նապէս 2011-ին ունեցաւ իր ներդրումը Հայաստան-Սփիւռք Ե. Խորհրդաժողովին:

Խորհուրդը «կը ջատագովէ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ խղճի ազատութեան հիմնական սկզբունքը»: Սակայն «կը հաւատայ, թէ կեդրոնաձիգ եկեղեցավարական դրութեան մը բացակայութիւնը կրնայ փորձութիւն դառնալ Եկեղեցական Միութեան մը թերացումին՝ առնուած որոշումները կիրարկելու իր պարտականութիւններուն մէջ»: Ուստի կը հրաւիրէ իր բաղկացուցիչ եկեղեցական Միութիւններն ու կազմակերպութիւնները, որ «իրենց ուշադրութիւնը կեդրոնացնեն իրենց նմանութիւններուն վրայ», նաեւ «վերահասու ըլլան այն իրողութեան, թէ՛ քանի որ Զրիստոսի Մարմինին անդամներ են՝ փոխադարձաբար իրարմէ կախեալ են»:

Կը շնորհաւորենք Խորհուրդին անխոնջ եւ ժրաջան Գործադիր Տնօրէնը, սոյն համապարփակ գիրքին համար, զոր կը յանձնարարենք ընթերցող հասարակութեան: Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցիներու ներկայ վիճակով եւ ապագայ մարտահրաւերներով հետաքրքրուող անձեր, այս գիրքէն օրինակներ ունենալու համար կրնան դիմել հետեւեալ հասցէին. Armenian Heritage Committee, 3922 Yorba Linda Blvd., Royal Oak, MI 48073, USA.

Լինն, Ֆրանսա
Դոկտ. Արի Թօփուզխանեան

Թուրք Պատմաբան. «Ցեղասպանության ժխտողականության պատճառներն մեկը Հայերեն առգրաւուած գոյքը վերադարձնելու հարցն է»

Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին օրը որպէս Կալիփոլիի ճակատամարտի յիշատակման օր հռչակելու Թուրքիոյ որոշումը, որուն նպատակն է փոխել միջազգային քննարկման թեման, ոչ այլ ինչ է, քան ժխտողական քաղաքականության գործիք: «Արմէնփրէս»-ի հետ զրոյցի ընթացքին յայտնած է թուրք երիտասարդ պատմաբան Մեհմետ Փոլաթելը՝ ընդգծելով, որ թրքական կառավարության այս քաղաքականութիւնը «անընդունելի է իր եւ այլ թուրք մտաւորականներու համար»:

Գիտնականը Հայաստան ժամանած է «Հայերու սեփականության առգրաւուումը Ցեղասպանության ընթացքին եւ անկէ ետք» թեմայով դասախօսութիւն ունենալու նպատակով:

«Ցեղասպանության ժխտողականության պատճառներն մեկն ալ հայերեն առգրաւուած գոյքը վերադարձնելու խնդիրն է,- համոզուած է Փոլաթելը,- ատիկա բնորոշ է ոչ միայն պետական մտածելակերպին, հայկական գոյքին տիրացած հասարակ մարդիկ նոյնպէս կը կարծեն, որ եթէ պետութիւնը ճանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը, հայերը պիտի գան եւ վերցնեն իրենց ունեցուածքը: Ահա թէ ինչու թրքական հասարակութիւնը նոյնպէս դեմ է ճանաչումին»:

Թուրք հասարակութեան մէջ փոփոխութիւններ սկսան նկատուիլ թրքահայ լրագրող Հրանդ Տինքի սպանութենէն ետք, ինչպէս նաեւ քրտական շարժման հետեւանքով: «Շատ մարդիկ սկսան մտածել, որ Հրանդ Տինքի սպանութիւնը նոյնպէս կապուած է Հայկական հարցին եւ Հայոց Ցեղասպանության խնդրին հետ: Հայ լրագրողը քաջութիւն կ'ունենայ խօսելու Հայոց Ցեղասպանության մասին եւ պետութիւնը թոյլ կու տայ կազմակերպութեան մը սպաննել զայն: Ասիկա հարցեր կը յառաջացնեն թուրք



ուսանողներու շրջանակին մէջ: Բացի այդ, շատ թուրք ուսանողներ հետազօտութիւններ կատարելու նպատակով կը մեկնին Թուրքիայէն դուրս, ի վիճակի կ'ըլլան կարդալու այլ գրականութիւն եւ անոնք նոյնպէս կը փոխեն իրենց մօտեցումը հարցին շուրջ: Միւս կողմէ ընկերային մտիան հնարաւորութիւն կու տայ մարդոց հեշտութեամբ հասնիլ տարբեր աղբիւրներու,- պարզաբանած է ան:

Ինչ կը վերաբերի «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան իշխանութեան գալլէն ետք որոշ հայկական հիմնադրամներուն վերադարձուած ունեցուածքին, Փոլաթելը կը նկատէ, որ անոնք բռնագրաւուած եղած են ոչ թէ Ցեղասպանության ընթացքին, այլ Հանրապետական Թուրքիոյ ժամանակ՝ 1926 թուակա-

նէն ետք:

Թուրք պատմաբանը չկրցաւ մտաբերել Ցեղասպանության տարիներուն բռնագրաւուած հայկական գոյքի վերադարձման գոնէ մէկ դէպք: Թրքական օրէնսդրութեան համաձայն՝ անոնք կը պատկանին պետութեան: «Նման փորձ եղած է Ատանայի մէջ 2001 թուականին, երբ հալէպցի հայ մը դիմած է դատարան՝ փորձելով վերադարձնել իր ծնողներուն պատկանող գոյքը: Դատարանը ընդունած է յայտը եւ որոշում կայացուցած, որ իսկապէս այդ ունեցուածքը ժամանակին պատկանած է այդ մարդու ծնողներուն: Սակայն տեղական լրատուամիջոցները սպառնացած են դատաւորին եւ բացասական նիւթեր հրապարակած են անոր մասին: Պետութիւնը ստիպած է դատաւորին տեղափոխուիլ այլ շրջան մը եւ ձգել գործը: Ես միայն այդ անյաջող փորձի մասին գիտեմ», - ըսած է ան:

Կարս ծնած եւ ներկայիս Իսթանպուլ բնակող Մեհմետ Փոլաթելը թեկնածուական թեզ կը պաշտպանէ Թուրքիոյ Պողոզի համալսարանին մէջ: Ան կ'ուսումնասիրէ օսմանեան պատմութիւնը եւ հետազօտութիւններ կը կատարէ Ցեղասպանության, իշխանութեան, պետութեան կազմաւորման եւ ընկերային փոփոխութիւններու վերաբերեալ:

Իր ուսումնասիրութեան համար ան օգտուած է տարաբնոյթ աղբիւրներէ, մասնաւորապէս, Հայոց Ցեղասպանութիւնը իրականացուած թրքական ղեկավարութեան յուշատետրերէն: Փոլաթելի խօսքով՝ Թուրքիոյ մէջ երթալով անելի ու անելի շատ երիտասարդներ կը սկսին հետաքրքրուիլ Հայոց Ցեղասպանության հարցով:

Այցելեցէք
www.tekeyanmontreal.org
 ԹՄՄ-ի ձեռնարկներ, լուսանկարներու ալպոմ,
 յայտարարութիւններ
 «Ապագայ» շաբաթաթերթի
 ամբողջ էջերը

Նուիրատուութիւն
 Թ.Մ.Միութեան Սարո Մանուկեան ֆոնտին կը նուիրեն՝ տոթթ. եւ տ. Էտուարտ եւ Մարթա Եղիայեան 100 տոլար, տիկ. Տիանա Քավաֆեան 20 տոլար:
www.mirrorspectator.com



Komitas
 SALON FUNÉRAIRE
 ԹԱՂԱՆԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

Funéraille Traditionnel Monument Pré-arrangement

5180, rue Salaberry
 Montréal, Québec H4J 1J3
 Tél. : 514 331-0400

www.komitas.ca

Գայուշ Զալքման-Կարիլոֆ... Շար. էջ 13-էն

Ձեր կարծիքով ինչքանով օգտակար է այս «լռութեան պատիւն» առկայութիւնը եւ ի՞նչ կը մտածէ Թուրքիոյ հասարակութեան այն հատուածը, որ քիչ թէ շատ կը հասկնայ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններուն առջեւ ծառայած դժուարութիւններուն խորութիւնը:

- Անշուշտ այս նիւթերու շուրջ խօսելու ժամանակ պէտք է միջպետական խաւերը առանձնացնել, բայց ներկայ պայմաններով, լաւ է որ սա կամ նա ձեւով երկու երկիրներու բարձրագոյն աթոռներու միջեւ երկխօսութիւն կայ: Եթէ ձեռք ձգենք երկու երկիրներու ժողովրդային խաւը, կրնանք ըսել թէ ոչ պետական կազմակերպութիւններու կամ անհատական ջանքերու շնորհիւ այս նիւթին շուրջ աշխատութիւններ գոյութիւն ունին, որոնց յաճախ մասնակից են Սփիւռքի հայերը: Ինչ կը վերաբերի թուրք հաւաքականութեան, կրնամ ըսել, թէ այս նիւթին շուրջ մարդկային մօտեցում ցուցաբերող, արդարութեան պահանջը զգացող զանգուա-

ծին համեմատութիւնը 10 առ հարիւր անգամ չէ: Այս տոկոսը ցաւալի քանակ մըն է 70 միլիոննոց երկրի մը մէջ: Ի՞նչ երկխօսութեան մասին կը խօսուի, երբ երկրի ժողովուրդին մեծամասնութեան ապրուստը, ինչքը եւ հարստութիւնը կայացած է ցեղասպանութեան զոհ գացած եւ աքսորուած հայերու ունեցուածքին վրայ: Այս հատուածը շատ լաւ գիտէ, թէ ցեղասպանութիւնը ընդունելով ամէն ինչ վերջ պիտի չգտնէ: Պահանջատիրութիւնը պիտի յաջորդէ ճանաչման: Ուրեմն այս իրողութեան ներքոյ, ո՞վ կ'ուզէ օժանդակել այդ ձեր ըսած ժայռերը վար առնելու:

- Յառաջիկայ Ապրիլին Պոլիսը նաեւ պիտի դառնայ ամբողջ հայրութեան համար կարեւոր հանդիսավայր: Ի՞նչ են ձեր ակնկալիքները այդ առումով եւ արդեօք որեւէ համակարգուած աշխատանքներ կան այդ ուղղութեամբ:

- Այո՛, որոշ հատուած մը պատրաստութեան մէջ է հարիւրամեակը նշելու ամենապատշաճ կերպով: Անշուշտ այդ հանդիսավայրը թատերավայրի դարձնելու փորձեր ալ անպակաս պիտի չըլլան: Թէ թուրք

եւ թէ հայ անձնաւորութիւններ իրենց դերերը պիտի կատարեն եւ կարելի եղածին չափ պիտի աղաւաղեն իրողութիւնը կամ եղելութեան լրջութիւնը: Իմ ակնկալութիւնը մեր բոլորին ակնկալութիւնն է, ճանաչում եւ հատուցում: Արդարութիւնը մեր բոլորի պահանջն է: Themis-ի (արդարութեան չաստուածը յունական դիցաբանութեան մէջ. իմբ.՝ Ս.Ա.) արդարութեան կշիռքը մինչեւ օրս ծառայած է թուրքերուն, այլեւ քիչ մըն ալ մեզի թող ծառայէ: Ինչ կը վերաբերի իմ գործունեութեան, կրնամ ըսել թէ ներկայիս որեւէ աշխատանք չեմ ստանձնած: Թող չկարծուի, որ անտարբեր եմ, ուղղակի ես կողմ եմ, որ պէտք է ներողամտութիւնը հայցուի: Ուրեմն բեմը թուրքերունն է, իրենք պէտք է խորհին թէ ի՞նչեր պէտք է ընեն պատմութեան այս մեծ ամօթը եւ իրենց թողած կեղտը մաքրելու համար: Ես չեմ կրնար ծրագիրներ մշակելով, ինքզինքս աջ ու ձախ նետելով այս հարցի շուրջ իրենց աջակցութիւն ցուցաբերել: Բայց պիտի չմերժեմ կարծիքս կիսիլ եւ գաղափարներս կիսել բոլոր անոնց հետ, որոնք լսել կ'ուզեն:

Ouverture de la nouvelle Pharmacie ARSLANIAN

Vos pharmaciens Abel et Alex Arslanian vous accueilleront au 1500 Blv Henri-Bourassa Ouest, coin Bois-de-Boulogne.

Vos professionnels de la Santé seront là pour vous servir tous les jours du Lundi au Vendredi de 8h00 à 20h00 et le samedi de 8 h à 18h00

Prise de pression artérielle, saturation d'oxygène, glycémie, cholestérol, suivi du dossier pharmacologique, service de livraison.

Vous pouvez transférer vos prescriptions si vous le souhaitez.
Bienvenue à notre clientèle fidèle.



Pharmacie Abel-Claude ARSLANIAN

1500 blv Henri-Bourassa ouest

Tel 514-303 3832



Affilié à UNIPRIX CLINIQUE

Բացում նոր Դեղարան ԱՐՍԼԱՆԵԱՆԻ

Ձեր դեղագործները Աբել եւ Ալեքս Արսլանեան ձեզ կ'ընդունին իրենց նոր հասցեին վրայ 1500 Blv Henri-Bourassa Ouest, coin Bois-de-Boulogne.

Ձեր առողջապահական մասնագետները պատրաստ են ձեզի միշտ ծառայելու ամեն օր երկուշաբթիէն Ուրբաթ առաւօտեան ժամը 8:00էն մինչեւ երեկոյեան ժամը 8:00, իսկ Շաբաթ օրերը առաւօտեան ժամը 8:00էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00:

Կրնաք նաեւ քննել տալ ձեր ճշումի մակարդակը, թթուածինի բաւարարուածութիւնը, շաքարախտի վիճակը, քոլեսթերոլը, ձեր դեղարանային թղթածրարի հետեւումը եւ դեղերու մինչեւ տուն սպասարկութիւնը:

Կրնաք նաեւ ձեր դեղերու թղթածրարները փոխանցել դեպի մեր դեղարանը ձեզի աւելի լաւ ծառայելու համար:
Բարի եկած էք մեր մօտ իբր հաւատարիմ յաճախորդներ:



Դեղարան Աբել - Գլօտ Արսլանեան

1500 blv Henri-Bourassa Ouest, Montréal, Qc

Քեռ. 514 303-3832